



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը իր բողոքի ելոյթով արտայայտում է կոչերով կու գայ միանալու աշխարհասփիւռ մեր հայրենակիցներուն, որոնք արդարացի ընդվզումով ու խոր մտառոտութեամբ կր հետեւին պատմական Քեսապի ու Բեսապահայութեան նակատագրին:

Անժխտելի փաստ է, որ, առանց քրքական իշխանութիւններու ուղղակի եւ անուղղակի մասնակցութեան, Քեսապը հակամարտութեան քատերաքմ պիտի չդառնար, ստիպելով մեր հայրենակիցներուն, որ կր կիւրոնեն տարագրութեան նամբան:

Միակ սփոփելի երեւոյթը այն է, որ առանց մարդկային կորուստներու անոնք կարողացած են հասնիլ ապահով վայրեր: Այսուհանդերձ, պէտք է գիտակցիմք, որ ծանր օրեր կը սպասեն մեր հայրենակիցներուն եւ անոնք իրաքանջիւրբանջիւրբա բարոյական ու նիւթական նեցուկին կը կարօտին:

Առ այդ, կոչ կ'ուղղեմք մեր աշխարհասփիւռ հայրենակիցներուն, որոնք արդէն իսկ իրենց մասնակցութիւնը կը բերեն սուրիահայութեան օժանդակութիւն ապահովելու գործին, կրկնապատկել իրենց ջանքերը, որպէսզի մեր հայրենակիցները կարողանան հաղթահարել այն ծանր փորձութիւնները, որ Սուրիոյ այս աւերիչ պատերազմը դեռ պիտի շարունակէ մատուցել անոնց:

Պահի հրամակայականն է, որ համայն հայութիւնը? Հայաստանի պետութիւնով, կուսակցութիւններով, կրօնական հաստատութիւններով եւ բարեսիրական միութիւններով գործէ միասնական ու համախմբուած ջանքերով, որպէսզի առաւելագոյնս կարողանանք օգտակար հանդիսանալ մեր Սուրիահայ բոյրերուն եւ եղբայրներուն:

Ս.Դ. Հ. Կ. Կեդրոնական Վարչութիւն
Մարտ 25, 2014

Թրքական Սահմանէն Յարձակում Կատարելով Սուրիացի Ապստամբները Գրաւեցին Քեսապը Շրջանի Հայութիւնը Տեղահան Եղաւ Դէպի Լաթաքիա

Մարտ 22-ի առաւօտեան կանուխ ժամերուն թուրքիոյ տարածքէն Սուրիոյ վարչակարգի հակակորդ գինեալ խմբաւորումներու՝ Քեսապի եւ շրջակայ բնակավայրերուն ուղղութեամբ կատարած լայնածաւալ եւ բուռն յարձակման հետեւանքով, շրջանի հայ բնակչութիւնը ստիպողական տարհանումի ենթարկուեցաւ դէպի Լաթաքիա:

Հայ կաթողիկէ եկեղեցւոյ տարածած հաղորդագրութեան համաձայն, յարձակման ընթացքին որեւէ հայագի գոհ չէ արձանագրուած, եւ հայ բնակչութիւնը՝ մօտաւորապէս 1500 մարդ, անվտանգ կարողացած են ապաստանիլ Լաթաքիա: Անոնց շարքին կը գտնուին նաեւ Հալէպէն եւ պատերազմական գործողութիւններու թատերաբեմ դարձած սուրիական այլ բնակավայրերէ որոշ հայրերիներ, որոնք ապաստանած էին Քեսապ, իբրեւ յարաբերաբար աւելի ապահով վայր:

Տարհանուածներու մեծամասնութիւնը տեղաւորուած է տեղի հայկական ընտանիքներու՝ ազգականներու եւ բարեկամներու տուներուն մէջ, իսկ մօտ 250 անձ պատսպարուած է քաղաքի հայ առաքելական եկեղեցւոյ գոյգ սրահներուն մէջ:

Լաթաքիոյ հայկական համայնքի ներկայացուցիչները կը հաղորդեն, որ տեղի միութիւնները եւ կազմակերպութիւնները աշխուժօրէն գործի լծուած են, ապահովելու համար տարհանուած հայրենակիցներու կենցաղային բոլոր կարիքները:



Ընդհանուր տեսարան հայկական Քեսապ քաղաքէն

Հայ համայնքի պատասխանատուները զօրաշարժի ենթարկած են նաեւ քաղաքային եւ նահանգային տարբեր կազմակերպութիւններ, բարեսիրական միութիւններ եւ պետական հաստատութիւններ, ինչպէս նաեւ անհատ բարերարներ, օգնութեան ձեռք մեկնելու համար անոնց:

Քեսապի շուրջ ապահովական կացութիւնը կը մնայ լարուած: Սուրիական լրատուամիջոցները հաղորդեցին, որ բանակը Լաթաքիայէն յաւելեալ ուժեր ուղարկած է Քեսապի շրջան, զսպելու համար ընդդիմադիրներու յառաջխաղացքը:

Սուրիական օդուժը հարուածած է թուրքիոյ հետ սահմանային անցակէտը, որ ինկած էր ընդդիմութեան տիրապետութեան տակ: Նախապէս, ընդդիմադիր իս-

լամիտ կազմակերպութիւններ բացայտած էին Քեսապի հրապարակին եւ գլխաւոր փողոցներուն վրայ նկարահանուած տեսագրութիւններ: Քեսապի մօտակայ բլուրներուն վրայ հրդեհներ բռնկած են:

Սուրիացի իսլամիտ գինեալները յայտարարեցին որ հայկական եկեղեցիներուն վնասելու պատակ չունին, սակայն որոշ տեղեկութիւններու համաձայն անոնք կ'օգտագործուին որպէս զինանոց:

Այլ տեղեկութիւններու համաձայն, Քեսապի տուները կողոպտուի կ'ենթարկուին եւ ապրանքները կը տարուին դէպի թուրքիա:

Այս ծիրին մէջ, սուրիական զարգացումները որպէս խաղա-

Շաքը էջ 4

Եւրոպայի Համար Հայաստան Այլեւս «Ուրիշ Լիկայի Մէջ Է»

Պրիւքսելի մէջ տեղի ունեցող Ամերիկա-Եւրոպայ տարեկան ֆորումի ընթացքին բոլոր մասնակիներու ուշադրութիւնը կեդրոնացած էր Ուքրաինոյ եւ Խրիմ հարցերուն:

Այս առթիւ Շուէտի արտաքին գործոց նախարար Քարլ Պիլսոնը պատասխանելով «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին, թէ ինչո՞ւ Հայաստանի հետ նոյնպէս չստորագրել Եւրոպայի հետ Ընկերակցութեան համաձայնագրի միայն քաղաքական մասը, ինչպէստէր այդ կատարուեցաւ Ուքրաինոյ պարագային, տուած է հետեւեալ ուշադրաւ պատասխանը:

«Հայաստանը ուրիշ լիգայի մէջ է: Ընկերակցութեան համաձայնագիրը քաղաքական ընդհանրութեան տեսակ է, որ գոյութիւն ունի տարբեր ոլորտներու մէջ: Հիմա մենք, օրինակ, կը տեսնենք հայերու, որոնք կու գան եւ կը պաշտպանեն Ռուսաստանի վարած քա-

ղաքականութիւնը Ուքրաինոյ դէմ: Այնպէս որ, ես չեմ կարծեր, որ անոնք այլեւս պատրաստ են նոյն քաղաքական լիգայի մէջ ըլլալու մեզի հետ»:

Պրիւքսելի ֆորումի ընթացքին Եւրոպական ու ամերիկեան կողմերը կը վիճէին՝ թէ արդեօք պէտք էր աւելի կոշտ արձագանքել Ռուսաստանին՝ Խրիմի հարցով:

Եւրոպայի Միութեան առեւտուրի հարցերով յանձնակատար Քարլ Դէ Հիւիտ իր խօսքին մէջ որպէս Ռուսաստանի վարած «բիրտ քաղաքականութեան» օրինակներ յիշատակեց Հարաւային Օսիան եւ Աբխազիան:

«Նոյնը անոնք ըրին Խրիմի մէջ. այդ ակնյայտ է: Ռուսաստան նաեւ Հայաստանին ստիպեց հրաժարելու մեզի հետ Ընկերակցութեան համաձայնագիրէն, ըսելով՝ «Տեսէք, եթէ դուք, հայերդ, ընէք այդ, մենք այլեւս չենք պաշտպաներ ձեզ Լեւնային Ղարաբաղի հարցով»:

Ըստ Ժիրայր Լիպարիտեանի ԵԱՀԿ Մինսկի խումբը Սպառած է Ինքզինք

1994-1997 տարիներուն ՀՀ նախագահի գլխաւոր խորհրդականի պաշտօնը վարած, Փրոֆեսոր Ժիրայր Լիպարիտեան Երեւանի մէջ տեղի ունեցած մամուլային ամբողջական լիպարիտեանի մը ընթացքին յայտարարեց, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը այլեւս գոյութիւն չունի եւ այն ինքզինք սպառած գործընթաց է:

Ըստ Լիպարիտեանի, Մինսկի խումբի երեք համանախագահները աւելի ոչ մէկ բան չեն ըներ, ինչ որ չկարողանային ընել օրինակ, Նիճերիան, Մալի եւ Մալիան:

«Ամերիկայի Միացեալ Նահանգները Նիճերիայէն կը տարբերի անով, որ գերտէրութիւն է, համապատասխանաբար ալ, պէտք է որոշակի ազդեցութիւն ունենայ: Սակայն նրանք կ'ըսեն, որ ոչինչ ընել չեն կրնար եւ միայն առաջարկութիւններով հանդէս կու գան», - ըսաւ Լիպարիտեան:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ածանցուող Հայաստան

ՄԻՔԱՑԷԼ ՄԱՀԱԿԵԱՆ

Մենք սիրում ենք աշխարհին մեղադրել երկակի ստանդարտներ կիրառելու մէջ: Աւելի շատ իշխանութիւնը, անհրաժեշտութեան դէպքում՝ նաեւ ընդդիմութիւնը, որեւէ հարցում ոչ հայանպաստ դիրքորոշման արտայայտման կամ քայլի դէպքում՝ շտապում են մեղադրել աշխարհին՝ երկակի չափանիշներով առաջնորդելու համար: Աշխարհ ասուծուն, այս դէպքում, իհարկէ, չափազանցութիւն է: Հայերը՝ ինչպէս իշխանութիւնը, այնպէս էլ՝ ընդդիմութիւնը երկակի ստանդարտների մէջ մեղադրելու հարցում իրար հերթ չեն տալիս, երբ խօսքը վերաբերում է Արեւմուտքին՝ ԱՄՆ-ին, Եւրոպային, ԵՄ-ին, եւ այլն: Սակայն նրանք նոյնքան ըմբռնումով են մօտենում երկակի ստանդարտների կիրառմանը, երբ կիրառողը Ռուսաստանն է: Օրինակները կարելի է հաշուել տասնեակներով: Եւրամիութիւնը որեւէ ոչ հայանպաստ բանաձեւ է ընդունում, Հայաստանում բոլորը յայտարարում են՝ ատրպէյճանական նախատուարներին ծախսած եւրոպացիները հերթական անգամ երկակի ստանդարտներ կիրառեցին, բայց երբ նոյն Ատրպէյճանին Ռուսաստանը 4 միլիարդ տոլարի գէնք է վաճառում, Հայաստանում բոլորը սկսում են բացատրել, որ գէնքի վաճառքը բիզնէս է, որ դրա մէջ որեւէ վատ բան չկայ, եւ այլն, եւ այլն: Հայաստանն ըմբռնումով է մօտենում ամենայն ռուսականին, հետեւում է Ռուսաստանի քաղաքականութեանը եւ հարկ եղած դէպքում՝ իր վարքագծով աջակցում է

դրան: Երկակի ստանդարտները Ռուսաստանի քաղաքականութեան գիւնանոցի ամենակիրառուող գործիքներից է, որը շատ յաճախ գործադրւում է նաեւ Հայաստանի դէմ: Սակայն Հայաստանը դրանից ոչ թէ հետեւութիւններ է անում, ոչ թէ փորձում է դրան դիմակայելու քայլեր ձեռնարկել, այլ ընդօրինակում է երկակի ստանդարտների ռուսական գործելաոճը եւ սովորաբար յայտնուած ծիծաղելի եւ քաղաքականապէս վտանգաւոր վիճակում:

Այն, որ Սիրիայի հայաբնակ քաղաքում տեղի ունեցածը վտանգաւոր է մեր հայրենակիցների համար, այն, որ Հայաստանը՝ որպէս պետութիւն, պէտք է ոչ միայն համապատասխան դիրքորոշում արտայայտի, այլեւ իր հայրենակիցներին սպառնացող վտանգը չէզոքացնելու կոնկրետ գործողութիւններ ձեռնարկի, քննարկման առարկայ է: Այդ առումով միանգամայն նորմալ է նաեւ Աժ պատգամաւորների յայտարարութիւնը, որը, սակայն, ոչ այլ ինչ է, քան երկակի ստանդարտների ցայտուն դրսեւորում: Ընդամէնը շաբաթներ առաջ ռուսական զօրքերը ներխուժեցին Ուկրաինայի մաս հանդիսացող Ղրիմ, որտեղ, ի դէպ, նոյնպէս մեծ թուով հայեր են ապրում: Ղրիմում ռուսական զօրքերի գործողութիւնները նոյնպէս վտանգ էին ու են սպառնում՝ տեղի, այդ թւում՝ հայազգի բնակիչներին: Սակայն Հայաստանի իշխանութիւնից որեւէ ծպտուն դուրս չեկաւ այնտեղ կատարուող իրադարձութիւնների վերաբերեալ, որեւէ մտահոգութիւն չհնչեցուեց: Աւելին, այսօր պատասխանելով պատգամաւորներից մէկի

հարցին, թէ ինչո՞ւ Հայաստանը որեւէ քայլ չի ձեռնարկում Քեսապում տեղի ունեցող իրադարձութիւնների առնչութեամբ, Աժ նախագահ Յովիկ Աբրահամեանը յայտարարել է, թէ՛ «Որպէս պետութիւն՝ չեն կարող միջամտել այլ սուվերէն պետութեան ներքին ինդիւրներին»: Ուշադրութիւն դարձրէք՝ այն, ինչ տեղի ունեցաւ եւ շարունակում է կատարուել Ղրիմում, ուղղակիորէն միջամտութիւն էր «այլ սուվերէն պետութեան ներքին ինդիւրներին»: Սակայն Հայաստանը ոչ միայն որեւէ դիրքորոշում չարտայայտեց այդ առնչութեամբ, այլեւ անուղղակիորէն պաշտպանեց միջամտող երկրի՝ Ռուսաստանի միջամտութիւնը: Այսքանից չեսոյ աւելորդ է նշել, որ Հայաստանի՝ հիմնականում իշխանական պատգամաւորների ստորագրութեամբ տարածուած յայտարարութիւնն ընդամէնը ընդհանուր մտահոգութիւն է արտայայտում տեղի ունեցածի վերաբերեալ՝ կատարուածը որակելով՝ որպէս մարդու իրաւունքների խախտման նողկալի դրսեւորում, եւ որեւէ խօսք չի պարունակում այն մասին, որ Քեսապը նման իրադարձութիւնների կիզակէտում է յայտնուել նաեւ ու առաջին հերթին՝ այն պատճառով, որ երկու տարի առաջ հայաբնակ այդ քաղաքի մօտակալքում Ռուսաստանը ռազիոտեղորոշիչ կայան էր տեղադրել, որը հնարաւորութիւն էր տալիս Սիրիայի գործող իշխանութեանը՝ այդ հատուածում հետեւել ոչ միայն ապստամբների գործողութիւններին: Բացի այդ, այդ կայանը հնարաւորութիւն էր տալիս արդէն Ռուսաստանին հետեւել թուրքիայի տարածքում տեղակայուած ՆԱՏՕ-ի զօրքերի տե-

ղաշարժին: Մրանք, ի հարկէ, աշխարհաքաղաքական ինդիւրներ են, որոնք, սակայն, մեր հայրենակիցների տեղահանութեան, նրանց կեանքին սպառնացող վտանգի առաջացման պատճառ են դարձել: Երկակի ստանդարտները վատ «յատկութիւն» ունեն: Դրանք յաճախ բումբերանգի էֆեկտով հետ են վերադառնում: Թէ՛ Արեւմուտքը, թէ՛ Ռուսաստանը երկակի ստանդարտների յետադարձ հարուածը ստանալու բազմաթիւ առիթներ ունեցել են: Հայաստանը չափազանց փոքր է նման հարուածների դիմակայելու համար: Երկակի ստանդարտների զոհ չդառնալու համար Հայաստանն ինքը պէտք է չկիրառի երկակի ստանդարտներ: Եթէ անգամ դա պէտք է Ռուսաստանին: Դա ոչ թէ պատգամաւորական յայտարարութիւնների, Աժ ղեկավարութեան կամ դիւանագիտական կորպուսի լաւ կամ վատ աշխատանքի, այլ առաջին հերթին՝ մտածողութեան, սկզբունքի մասին է, որը պէտք է դուռի արտաքին քաղաքականութեան հիմքում: Սակայն այն, ինչ Հայաստանի իշխանութիւնների կողմից իրականացւում է՝ որպէս արտաքին քաղաքականութիւն, ոչ թէ համակարգի աշխատանքի, հայեցակարգային դրոյթների արտայայտութիւն է, այլ իրավիճակային քայլերի ամբողջութիւն: Հետեւաբար՝ այն, ինչ երկուշաբթի օրը բխում է Հայաստանի շահերից, չորեքշաբթի օրը կարող է հակասել Հայաստանի շահերին, հանգստեան օրերին կարող է մասնակիորէն կրկին տեղաւորուել Հայաստանի շահերի տիրոջութիւն: Հայաստանի շահ ասուածն արդէն դարձել է ածանցեալ մեծութիւն, որը բխում է Ռուսաստանի շահերից: «168ԺԱՄ»

Չանգեր Կրեմլից՝ Սերժ Սարգսեանի իշխանութեան պահպանման համար

ԹԱՄԱՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Նախօրէին 168.am-ը տեղեկութիւն էր հրապարակել այն մասին, թէ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի մերձակոր շրջապատի ներկայացուցիչները վստահեցնում են, որ օրեր առաջ հեռախօսային խօսակցութիւն է ունեցել Ռուսաստանի իշխանութեան շատ բարձրաստիճան ներկայացուցչի հետ, սակայն թէ կոնկրետ ում հետ է եղել խօսակցութիւնը, չգիտեն անգամ նրանք, ովքեր համարում են առաջին նախագահի ամենավստահելիները:

«Բայց կարելորդ ոչ թէ դա է, այլ այն, ինչ ներկայացուել է այդ հեռախօսազրոյցից յետոյ. Տէր-Պետրոսեանի զրուցակիցը վստահեցրել է, որ ռուսական իշխանութիւնն ամբողջովին աջակցում է ՀԱԿ-ին, ինչը նշանակում է, որ իշխանափոխութեան գործը կարելի է ամբողջ թափով առաջ տանել: ՀԱԿ-ին մօտ կանգնած աղբիւրները վստահեցնում են, որ Ռուսաստանի իշխանութիւնն այլեւս չի վստահում Հայաստանի գործող իշխանութեանը, որն ամէն հնարաւոր առիթով «խաղեր է տալիս» Արեւմուտքի հետ, եւ մտադիր է Հայաստանում ունենալ աւելի կայուն եւ վստահելի գործընկեր: ՀԱԿ-ում տեղեակ են նաեւ, որ Ռուսաստանի բարձրաստիճան պաշտօնեաները խօսել են նաեւ ԲՀԿ-ի ղեկավարի հետ եւ նրան եւս յորդորել են ակտիւորէն

ներգրաւել ներքաղաքական պայքարում: Ի տարբերութիւն ՀԱԿ-ի ղեկավարութեան, ԲՀԿ ղեկավարն ունի սեփականութեան պահպանման ինդիւր, եւ ըստ ամենայնի՝ Ռուսաստանից երաշխիք են տուել, որ իշխանութեան դէմ բացայայտ հանդէս գալու դէպքում կ'ապահովեն Ծառուկեանի սեփականութեան անձեռնմխելիութիւնը», գրել էր թերթը: Այնուուամենայնիւ, թէ որքանով են իրական այս խօսակցութիւնները՝ թերթն էլ յստակ չէր նախանշել:

Այն, որ Հայաստանի գրեթէ ողջ քաղաքական դաշտը վերահսկուում է Մոսկուայի կողմից, այլեւս որեւէ մէկի համար գաղտնիք չէ: Դեռ աւելին, այսօր պարզ է, որ Մոսկուայի հայացքին արժանանալու համար մրցակազմ է, Երեւանում ընդդիմադիրները դեռ յոյսները չեն կորցրել՝ իրենց աստեղային ժամին հասնելու առումով՝ աչքերը ջուր կտրած, սպասում են Կրեմլի միջնաքննիչից ուղարկուող հերթական պատգամներին:

Այստեղ, ինչպէս ասում են, ամէն ինչ պարզ է: Հաւանաբար, այս սպասման արդիւնքն էլ այն է, որ Սերժ Սարգսեանը վեց տարի է իշխանութիւն է Հայաստանում: Բայց, սոյն փաստը մեր «հուժկու ընդդիմադիրներին» ամենեւին էլ թեւաթափ չի անում: Նրանք դեռ յոյս ունեն, որ Սերժ Սարգսեանի վրայ բարկացած Պուտինը մի օր հրամանագիր կը ստորագրի եւ

զահրնկեց կ'անի Սերժ Սարգսեանին, իսկ «հուժկու ընդդիմութեան» ներկայացուցիչներից մէկին՝ Ռոբերտ Քոչարեանին կամ Գագիկ Ծառուկեանին կը նշանակի Հայաստանի նախագահ:

Սա էլ է պարզ... Չաւենշտը նրանում է, որ Մոսկուայից զանգերը ներկայացւում է, որպէս Հայաստանում իշխանափոխութեան իրականացման լրջագոյն գրաւական... Իսկ մեր «հուժկու ընդդիմադիրներին» մտքով չի՞ անցնում, որ Մոսկուան վերահսկողութեան տակ պահելու համար Սերժ Սարգսեանի իշխանութեանը՝ նման զանգերով է «կերակրում» մեր «հուժկու ընդդիմադիրներին», որպէսզի նրանք չանցնեն անթոյլատրելի սահմանները:

Այդ ո՞ր հարցերում հիմա կարող է Մոսկուան զայրացած լինել Սերժ Սարգսեանի նկատմամբ... Մաքսային Միութիւն չի՞ մտել Հայաստանը, զագային պայմանագիր չի՞ ստորագրել, թէ ռուսական ռազմաբազաները Հայաստանից դուրս բերելու յայտարարութիւն է արել, կամ գուցէ ԱՊՀ-ից դուրս գալու, եւ ի վերջոյ չի՞ պաշտպանել Ղրիմի միացումը Ռուսաստանին... Այսինքն, երբ «հուժկու ընդդիմադիրները» փորձ են անում Կրեմլի հետ իրենց շփումները ներկայացնել այս սցենարով՝ բան

Շաբ.ք էջ 18

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ. Աւետիսեանին Առաջարկել ԵՆ Դադարեցնել Պայքարը՝ Ազատութեան Դիմաց

Պահեստագործի գնդապետ, Սեպտեմբերի 20-ից անազատութեան մէջ գտնուող Վոլոդիա Աւետիսեանը չի ընդունում իրեն առաջարկուած մեղադրանքը, եւ իր՝ ամբաստանեալի աթոռին յատնուելը համարում է քաղաքական հետապնդման հետեւանք:

Այս մասին Մայիս 26-ին Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զէյթուն վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանի դահլիճում յայտարարեց նա՝ նշելով, որ իր՝ դեռ Մայիսից անցկացրած նստացոյցից 3-4 օր առաջ իրեն պարբերաբար մօտեցել են մարդիկ եւ առաջարկել դադարեցնել նստացոյցը՝ խոստանալով գումարային փոխհատուցում, բիզնես էջմիածնում կամ Երեւանում, սակայն ինքը հրաժարուել է:

Նաեւ նշում է, որ իրեն այցելել է քննիչը անազատութեան շրջանում եւ ասել, որ եթէ հրաժարուի պաշարից, ազատ կ'արձակուի, սակայն դրանից էլ է հրաժարուել: «Ես իմ հոգին եւ հայրենիքը չեմ վաճառում»: Այս խօսքերից յետոյ դահլիճում ներկայ մարտական ընկերները ծափահարեցին՝ վանկարկելով՝ «Վոլոդիա-Վոլոդիա»: Սակայն դատաւոր Լեւոն Աւետիսեանը զգուշացրեց, որ եթէ միւս անգամ այդպիսի



Գնդապետ Վալոդիա Աւետիսեան դատարանի դալիճէն ներս

վանկարկումներ լինեն, ստիպուած կը լինի նիստերը դուստակ անցկացնել:

Վոլոդիա Աւետիսեանի պաշտպան Արա Զաքարեանը ինքնաբացարկի միջնորդութիւն է ներկայացրել դատաւորին՝ նշելով, որ Վոլոդիա Աւետիսեանին մեղսագրուող արարքները չեն կատարուել Արաբկիր եւ Քանաքեռ-Զէյթուն վարչական շրջաններում, ուստի դատաւորն ընդհանրապէս այս գործն իր վարույթ չպէտք է վերցնէր:

NEWS.am-ի թղթակցի հաղորդմամբ՝ դատին մասնակցելու են եկել մեծ թիւով ազատամարտիկներ: Մի մասին թոյլ չեն տուել մտնել դատարանի դահլիճ:

Հայաստանի Բնապահպանութեան Նախարարը Ակտիւիստին «Լակոտ» Է Կոչել

«Ես պէտք է հանգստացնէի խուլիգաններին ու արեցի դա»: Այս մասին յայտարարել է Հայաստանի բնապահպանութեան նախարար Արամ Յարութիւնեանը՝ խորհրդարանի նիստից յետոյ հանդիպելով լրագրողներին հետ:

Նշենք, որ հանքարդիւնահանութեանը նուիրուած միջազգային կոնֆերանսի ժամանակ նախարարը անյարիր արտայայտութիւն էր թոյլ տուել բնապահպան ակտիւիստների հասցէին: Ակտիւիստները իրենց ռեպրիզենտով ուղեկցել են նախարարների ելոյթները: Նախարարը յայտարարել է, որ հենց դա է իրեն հանել հունից: «Ամէն ինչ յանգեցրել է նրան, որ այդ մարդիկ բարձրա-

նում էին աթոռներին: Դուք դա նորմալ էք համարում: Ես գտնում եմ, որ դա խուլիգանութիւն է: Իսկ ես խուլիգաններին տանել չեմ կարողանում, ինչպէս որ ցանկացած տղամարդ», - յայտարարել է նախարարը:

Այն հարցին, արդեօք նախարարը ներողութիւն է խնդրելու «ականջներդ կը կտրեմ, լակոտ» արտայայտութեան համար, նախարարը պատասխանել է, որ գործել է «եղնելով իրադրութիւնից»: «Եթէ ինձ էք հարցնում, թէ ինչու եմ դա ասել, ապա հարցրէք ակտիւիստներին, թէ մինչեւ այդ նրանք ինչեր էին ասում ու ինչու էին խախտում կարգը, եւ ով է դա նրանց թոյլ տուել», - յայտարարել է նախարարը:

Որ Կուսակցութեան Է Բնորոշ Առնետավազը

Կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանը գիտի, թէ ինչու ոչ իշխանական ուժ համարուող «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը չի յայտարարում ընդդիմադիր լինելու մասին. «ԲՀԿ-ն չի յայտարարում իր ընդդիմադիր լինելու մասին, որովհետեւ այդ դէպքում այդ ընդդիմութիւնից բազմաթիւ մարդիկ դուրս կը գան»:

Ըստ նրա, այս օրերին, երբ լրջօրէն դրուած է կառավարութեան անվստահութիւն յայտնելու հարցը, ծիծաղելի է խօսել Հանրապետականից առնէտավազ սկսելու գործընթացի մասին: Առնէտավազն ասելի սպասելի է ԲՀԿ-ից. «Այն մարդիկ, ովքեր միախմբուած են ԲՀԿ-ում, այդ թուում՝ պատգամաւորներ, չեն եկել, չեն ընտրուել, չեն մտել քաղաքականութեան մէջ ի սկզբանէ իմանալով, որ ԲՀԿ-ն դառնալու է ընդդիմադիր»:

Մի քայլի Մեկընթացն են իրեն համարում է ԲՀԿ-ի 10 հիմնադիրներից մէկը: Ընդդիմադիր եղել է

եւ էլի կը լինի, ընդդիմադիր հռչակուող ԲՀԿ-ից հաստատ դուրս չի գալու. «Կը լինի իշխանութիւն, ընդդիմադիր, այլընտրանք, երբեք դուրս չեմ գա»:

Աւելին, Մի քայլի Մեկընթացն են բացառում է, որ ԲՀԿ-ի ընդդիմութիւն հռչակուելուց յետոյ զանգուածային առնէտավազ կը սկսուի կուսակցութիւնից եւ իմբակցութիւնից. «Կարող ա մի հոգի, բայց էդ էլ չի լինի»:

ԲՀԿ-ի ընդդիմադիր դառնալուց յետոյ ով-ով, բայց Նաիրա Զոհրաբեանը հաստատ չի լինելու այդ մէկը: Լրագրող աշխատած տարիներին նա շատ լաւ է յիշում, թէ ինչպէս էին ՀՀՇ-ականները դառնում հանրապետական ու երկրապահ. «Առնէտների մասնագէտները թերեւս իրենք են»:

Տիկին Զոհրաբեանը Հանրապետականին կոչ է անում առնէտների բնորոշ իրենց վարքը չտարածել այլ կուսակցութիւնների վրայ: Կը գայ ժամանակը եւ Արմն Աշոտեանը դրանում կը համոզուի:

«Դէմ Եմ» Նախաձեռնութիւնը Բազմամարդ Հանրահաւաք Անցկացրեց



«Դէմ Եմ» Նախաձեռնութեան Բազմամարդ Հանրահաւաքի մասնակիցները

«Դէմ Եմ» քաղաքացիական նախաձեռնութիւնն բազմամարդ հանրահաւաք էր կազմակերպել Երեւանի Ազատութեան հրապարակում:

«Դէմ Եմ» գրութեամբ սպորտային վերնաշապիկներ հագած՝ կազմակերպիչները հանրահաւաքի ելոյթների հարթակին մօտեցան թմբուկների զարկերի ուղեկցութեամբ: Երիտասարդ ակտիւիստները կրկին անգամ խստօրէն քննադատեցին պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգ ներդնելու՝ Կառավարութեան նախաձեռնութիւնը:

«Մենք թոյլ չենք տալու մեր ձեռքից խլելու մեր սեփականութիւնը: Եկէք բոլորով գոչենք, ասենք նրանց՝ ոչ թախանին», - բեմից յայտարարում էին կազմակերպիչները, - «Մենք յաղթելու ենք, մենք պայքարելու ենք ու զնալու ենք մինչեւ վերջ»:

Բեմից հնչեցուցին այն ընկերութիւնների եւ կազմակերպութիւնների անուանումները, որոնց աշխատակիցները անցած երեք ամիսների ընթացքում գործադուլի, բողոքի միջոցով ընդդիմացել են օրէնքին: Հնչեցին, մասնաւորապէս, Գիտութիւնների ազգային ակադեմիայի, Ատոմակայանի, «Հայաստանի էլեկտրական ցանցեր»-ի, Մետրոպոլիտենի, Հարակովկասեան երկաթուղու, Օպերայի եւ բալետի ազգային թատրոնի անուանումները:

Ազգային ժողովի 4 ոչ իշխան-

ական իմբակցութիւնների ներկայացուցիչներն հարթակի վրայ ներկայացան որպէս շարքային քաղաքացի: Իւրաքանչիւրն իր ելոյթով հաստատեց նախաձեռնութեան անդամների այն յայտարարութիւնը, որ այս պայքարը համախմբել է քաղաքական տարբեր հայեացքներ ունեցող մարդկանց:

Թէեւ շարժման ներկայացուցիչները պարբերաբար ընդգծում են, որ իշխանափոխութեան պահանջ չեն ներկայացնում, Բաֆֆի Յովհաննիսեանն իր ելոյթում պահանջեց նախագահ Սերժ Սարգսեանի հրաժարականը:

Պարտադիր կուտակային համակարգի ներդրման միակ փաստարկն այն է, որ Հայաստանին պէտք են երկար ու հօտան փողեր տնտեսութեան մէջ ներդնելու համար՝ կարծիք յայտնեց ԱԺ պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը՝ յաւելելով, որ կառավարութիւնը սխալ տեղ է փող փնտռում, քանի որ թախանուած ժողովուրդն այլեւս փող չունի: Որպէս այլընտրանք Փաշինեանը կառավարութեանն առաջարկեց դիմել օլիգարխներին:

«Սա պայքար է յանուն հանրութեան 80 տոկոսի, եւ ուրեմն՝ յանուն ժողովրդավարութեան ու Սահմանադրութեան: Ու կասկած չկայ, որ այս պայքարը անխուսափելիօրէն պահուելու է յաղթանակով», - ասաց Փաշինեանը:

Հանրահաւաքին յաջորդեց երթ՝ մայրաքաղաքի կենտրոնական փողոցներով:

«Հարսնաքարի» Գործով Ամբաստանել Գերդ Դատապարտուեցին 12-ական Տարուայ Ազատազրկման

Աւան եւ Նոր-Նորք համայնքների առաջին ատենախորհուրդի անդամները իրաւասութեան դատարանի հրապարակած դատավճռով գինուորական բժիշկ Վահէ Աւետեանի մահուան մէջ մեղադրուող ճամբաստաններին այսօր դատապարտուեցին 12-ական տարուայ ազատազրկման եւ վարչական տոյժի՝ 100 հազարական դրամի չափով:

Դատավճռի հրապարակման կէսից ամբաստանեալները հայհոյանքներ, անէծքներ եւ սպառնալիքներ հասցէագրեցին տուժող կողմի փաստաբաններին, նրանց ընտանիքի անդամներին: Ամբաստանեալներից հետ չմնացին նրանց հարազատները՝ ձեռքներին եղած առաքական շարտեցին դատաւորի ուղղութեամբ, անէծքներ, հայհոյանքներ եւ սպառնալիքներ ուղղելով նաեւ դատավարութիւնն

աւելի քան մէկուկէս տարի լուսաբանող լրագրողներին:

Դատական կարգադրիչները դժուարութեամբ կարողացան զսպել ամբաստանեալներից յատկապէս Գարիկ Մարգարեանին եւ Նորայր Հայրապետեանին: Վերջիններս առաջ էին մղում Վահէ Աւետեանի իրաւաջողորդի ներկայացուցիչփաստաբաններ Տիգրան Եգորեանի եւ Լուսինէ Յակոբեանի ուղղութեամբ՝ փորձելով վնասել նրանց:

2012 թուականի Յունիսի 17-ին «Հարսնաքար» ռեստորանային համալիրում տեղի ունեցածի վերաբերեալ գնահատականների առանցքում շարունակուած է մնալ պնդումը, որ ռազմական բժիշկ, 33-ամեայ մայր Վահէ Աւետեանը դարձաւ օլիգարխի շուրջ ձեւաւորուած ամենաթողութեան եւ անպատժելիութեան մթնոլորտի գոհ:

ԼՈՒՐԵՐ

Ռազմական Փորձագետ.- «Մոսկուան Առաջիկայում Ակտիվ Գործողություններ Հայաստանում Չի Ձեռնարկի»

Ռազմական հարցերով փորձագետ Պալեկ Ֆելզենհաուերը համարում է, որ առաջիկայում Ռուսաստանն այնքան զբաղուած է լինելու Ուկրաինայում, որ որեւէ ակտիվ գործողություններ Հայաստանում, Բելառուսում եւ յատկապէս Հայաստանում չի ձեռնարկելու:



Ռազմական հարցերով փորձագետ Պալեկ Ֆելզենհաուեր

ճակի կտրուկ սրում արեւելեան շրջաններում:

«Առաջիկայ շաբաթներին արդէն Ռուսաստանը կը ձեռնարկի մեծ արշաւ Ուկրաինայում, քանի որ Արեւմուտքը չի ընդունել Ուկրաինայում սահմանադրական փոփոխութիւններ անցկացնելու եւ այն ֆեդերացիա դարձնելու Ռուսաստանի առաջարկը», - ասում է Ռուսաստանի փորձագետը:

Յիշեցնենք՝ Մարտի 18-ի իր ելույթում Վլադիմիր Պուտինն ասել էր, որ Ղրիմի սցենարը չի կրկնուի Ուկրաինայի միւս շրջաններում: Չնայած Ռուսաստանի նախագահի այս յայտարարութեանը, Պալեկ Ֆելզենհաուերը շատ հաւանական է համարում, որ Ուկրաինայում առաջիկայում սկսուի քաղաքացիական պատերազմ, եւ Ռուսաստանը գնա դէպի Ուկրաինա:

Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը ասել էր, որ եթէ Ռուսաստանը դուրս գայ Ղրիմի սահմաններից, այսինքն չբաւարարուի Ղրիմով, Եւրոպան կը դիմի վճռական քայլերի, նոյնիսկ եթէ դրանց արդիւնքում տուժի հենց Եւրոպայի տնտեսութիւնը:

«Ռուսաստանն առաջիկայում խրուած է լինելու Ուկրաինայում, յետխորհրդային միւս երկրներում Մոսկուան պարզապէս չի կարող ակտիվ լինել», - «Ազատութեան» հետ զրոյցում փոխանցեց փորձագետը:

Ըստ փորձագետի՝ այլ հարց է, որ Ադրբեյջանը կարող է դիմել կտրուկ քայլերի, եթէ տեսնի, որ Մոսկուան ամբողջովին տարուած է Ուկրաինայով եւ եթէ ուկրաինական զարգացումները հակասեն Մոսկուայի շահերին:

«Իհարկէ, Ադրբեյջանը կարող է օգտուել այս հանգամանքից, ընդհանրապէս ռուս-ուկրաինական այս ճգնաժամը շատ բան կարող է փոխել՝ եւ ոչ միայն յետխորհրդային տարածաշրջանում», - ասաց Ֆելզենհաուերը:

Ինչ վերաբերում է Պուտինի Եւրասիական ծրագրերին, թէեւ այսօր աւելի յաճախ է հնչում այն կարծիքը, որ Եւրասիական Միութիւնը դեռ չմեկնարկած կարող է տապալուել, Ֆելզենհաուերը համոզուած է, որ Պուտինն էլ աւելի առաջ կը տանի այս նախաձեռնութիւնը:

«Եւրասիական իր ծրագրերից Մոսկուան չի հրաժարուի եւ իր գործընկերներից էլ՝ Բելառուսից, Հայաստանից եւ Հայաստանից կը պահանջի աւելի յստակ դիրքորոշում արտայայտել», - ասաց Ռազմական փորձագետը:

Իսկ Ուկրաինայում Ֆելզենհաուերը կանխատեսում է իրավի-

Ապստամբները Գրաւած Են Քեսապը

Շարունակուած էջ 1-էն

քարտ կը գործածուին Թուրքիոյ տեղական կառավարման ընտրութիւններու նախօրէին: Ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցութիւնը վարչապետ Ռէճեփ Թայյիպ Էրտողանի կառավարութիւնը ամբաստանեց Սուրիոյ դէմ զինուորական յարձակումի մը ձեռնարկելու յանձնարարութիւն: Կուսակցութեան համաձայն, Էրտողան կը մտադրէ բանակը տեղաշարժելով քաղաքապետական ընտրութիւններուն յաղթանակ ապահովել:

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ իր խոր մտահոգութիւնը յայտնեց Քեսապի շուրջ ստեղծուած իրավիճակին կապակցութեամբ: «Մենք բոլորս շատ լաւ կը յիշենք Քեսապի պատմութիւնը, որ վերջին հարիւրամեակին հարուստ է հայերու տեղահանումի դժոխային իրողութիւններով», ըսաւ Սարգսեան: Ան անդրադարձաւ 1909-ի եւ 1915-ի տեղահանութիւններուն մասին ապա դիտել տուաւ, որ այսօր պատահածը երրորդ տեղահանութիւնն է, կազմելով ազգային փոքրամաս նութիւններու պաշտպանութեան 21-րդ դարու լրջագոյն մարտահրա-

ւէր մը:

«Ես յանձնարարած եմ ՄԱԿի՝ Նիւ Եորքի եւ ժընեւի գրասենեակներուն մէջ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցչութիւններուն՝ հետամուտ ըլլալ մարդու իրաւունքներու եւ ազգային փոքրամասնութիւններու հարցերով մասնագիտական կառույցներուն մէջ Քեսապի հայութեան անվտանգութեան երաշխաւորման եւ անոնց բնակութեան մշտական վայրեր ապահով վերադարձի ինդիքներն ըուն», ըսաւ Սարգսեան:

Հայաստանի Ազգային Ժողովի խումբ մը պատրգամաւորներ Այցելեցին Լաթաքիա, տեղույն վրայ ծանօթանալու համար տիրոպէտութեան: Իսկ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Տիգրան Պալայեան յայտարարեց, որ Քեսապէն տեղահանուած հայերու հարցը կը գտնուի Երեւանի ուշադրութեան կեդրոնին: «Մենք միջոցներ կը փորձենք գտնել՝ անոնց հնարաւորին տարբեր ձեւերով օժանդակելու համար», ըսուած է Պալայեանի յայտարարութեան մէջ:

Հայաստանի մէջ ձայներ սկսան բարձրանալ, որ գինեալ Չոկատներ պէտք է ուղարկել՝ Քեսապի հայութիւնը պաշտպանելու համար:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Միացեալ Նահանգներու հայութիւնը կը դատապարտէ Սուրիոյ հայաբնակ Քեսապի վրայ բուրբ պետութեան մեղսակցութեամբ կատարուած յարձակումը, անընդունելի կը գտնէ անոր բնակիչներու տեղահանումը եւ կը պահանջէ Սպիտակ Տունէնու աշխարհի պետութիւններէն՝ կտրուկ քայլեր առնել դուրս բերելու գինեալները Քեսապէն, ինչպէս նաեւ դիրքացնելու տեղահանուած քեսապցիներու տուն վերադարձը:

Մեր համայնքի հայութիւնը իր ամբողջական գորակցութիւնը կը յայտնէ համայն սուրիահայութեան ընդհանրապէս ու մասնաւորապէս Քեսապի հայութեան, վստահեցնելով, որ պիտի շարունակէ հնարաւոր ամէն միջոցներով, եւ որեւէ աշխատանք չիսնայելով, աջակցիլ անոնց վերադարձին:

Հայ համայնքի առաջնորդներն ու ներքոյիշեալ կառույցները շտապ գումարուած հանդիպումի մը ընթացքին խորհրդակցեցան անմիջական ու հեռակայ օժանդակութեան ու գորակցութեան միջոցներով մասին, վերահաստատելով սուրիահայութեան օժանդակութեան իրենց յանձնարարութիւնը: Որոշուեցաւ անմիջապէս Սուրիահայութեան Օժանդակութեան Միացեալ Մարմին (SARF) դիմել որ յառաջիկայ օրերուն անմիջականօրէն սուրիահայութեան, ու յատկապէս քեսապահայութեան կարիքներուն համար շարունակէ իր ազգօգուտ հանգանակային աշխատանքը, որուն անկասկած պիտի գորակցին մեր համայնքի ազակիցները:

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ

Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմ

Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ Առաջնորդարան
Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն
Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն
Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն
Ռամկավար Ազատական Կուսակցութիւն
Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն
Հայ Օգնութեան Միութիւն
Քեսապի Ուսումնասիրաց Միութիւն
Մարտ 25, 2014
Լոս Անճելես

Թուրքիա Կը Յերթ Քեսապի Դէմ Յարձակման Ժամանակ Իր Տարածքի Օգտագործումը

Թուրքիայի Արտաքին Գործոց Նախարարութիւնը պաշտօնական յայտարարութիւն է տարածել, որում հերքել է Քեսապի դէմ իրականացուած յարձակման ժամանակ Թուրքիայի տարածքն օգտագործելու եւ Թուրքիայի կողմից գինեալներին օժանդակութիւն ցուցաբերելու մասին տարբեր պնդումները՝ դրանք որակելով որպէս քաղաքական նպատակներով քարոզչութիւն:

«Որոշ շրջանակների պնդումները, որով Քեսապի շրջանում տեղի ունեցող դէպքերի եւ անցեալի որոշ ցաւալի իրողարձուութիւնների մէջ գուզահեռներ են տարուում՝ դիտարկում ենք որպէս քաղաքական քարոզչութիւն եւ դատապարտում ենք», - ասուած է յայտարարութեան մէջ:

Թուրքական կողմը նաեւ պատրաստակամութիւն է յայտնել որպէս մարդասիրական մօտեցում Թուրքիայի տարածքում ապաստան տրամադրել եւ պաշտպանու-

թեան տակ առնել յատկապէս Քեսապի բնակիչներին, ինչի հետ կապուած դիմել է ՄԱԿ-ի կառույցներին: Տեղեկացուած է, որ սիրիահայերի կարիքների ապահովման համար անհրաժեշտ քայլեր են արուելու:

«Թուրքիան, որպէս մարդասիրական եւ բարոյական պարտականութիւն, Քեսապի շրջանի սիրիահայերին երկրում ընդունելու եւ նրանց անվտանգութիւնն ապահովելու ցանկութիւն է յայտնել եւ այդ մասին տեղեկացրել է ՄԱԿ-ի համապատասխան կառույցներին», - ասուած է յայտարարութեան մէջ:

Նաեւ նշուած է, թէ ԱԳՆ-ն կապ է հաստատել հայ համայնքի ներկայացուցիչների հետ եւ շարունակելու է բանակցութիւնները: «Ինչպէս միւս սիրիացի փախստականների, այնպէս էլ սիրիահայերի պահանջները բաւարարելու համար անհրաժեշտ քայլեր են ձեռնարկուելու», - յայտնել են Թուրքիայի ԱԳՆ-ից:

Հայաստանը ՄԱԿ-ում Ձեռնպահ Կը Քուէարկի Ղրիմի Վերաբերեալ Բանաձեւի Նախագծին

Հայաստանը ձեռնպահ է քուէարկելու ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեիայում Ուկրաինայի ներկայացրած բանաձեւի նախագծին, որով անվաւեր է ճանաչուած Ղրիմում տեղի ունեցած հանրաքուէն:

Կիւեւի առաջարկած բանաձեւում նշուած է, որ Մարտի 16-ին Ղրիմի ինքնավար Հանրապետութիւնում տեղի ունեցած հանրաքուէն իրաւական ուժ չունի, ուստի չի կարող հիմք հանդիսանալ Ղրիմի եւ Սեւաստոպոլ քաղաքի կարգավիճակի փոփոխութեան համար:

Այս տեղեկութիւնն ուշագրաւ է օրերս տեղի ունեցած Հայաստանի ու Ռուսաստանի նախագահների յատնի հեռախօսազրոյցի կոնտեքստում, որի ժամանակ կողմերը «անդրադարձել էին Ղրիմում հանրաքուէի անցկացումից յետո ստեղծուած իրավիճակին եւ արձանագրել, որ այն հանդիսանում է ազատ կամարտայայտման միջոցով ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի իրացման հերթական օրինակը»:

Այս հաղորդագրութիւնից յետոյ պաշտօնական կիւեւը յայտարարեց, որ ետ է կանչել Երեւանում իր դեսպանին, մինչեւ հայկական կողմը չյստակեցնի իր դիրքորոշումը՝ ճանաչում է արդեօք Ղրիմի բռնակցումը Ռուսաստանին:

«Չայերը Վարժ ԵՆ Իրենց Քուէները Իրենց Դահիճին Տալու», Կ'ըստ Թուրքիոյ ՏԻՍ-ի ընտրութիւններուն իր թեկանծութիւնը դրած հայուհին



Գայուշ Չալըքման-Կալըիլոֆը Չապէլ Եսայեանը իր «Հերոսը» կը համարէ եւ այդ մասին բացատրելով կ'ըսէ թէ Չապէլի ոգին ու ըրած գործը շատ մեծ արժէք մը ունին ինծի համար: Իր ապրումով, իր գրաւոր խօսքով եւ հուժեղ ան անկիւնադարձային կերպար է ու ես անոր ուղիով է որ կը քալեմ այսօր, յոյս ունենալով որ իր վարձանին չեմ ենթարկուիր...»:

Խօսակիցս որուն թրքերէն թարգմանութեամբ օրերս Պոլսոյ մէջ լոյս տեսաւ Չ. Եսայեանի «Աւերակներու մէջ» հատորը («Արաս» հրատարակչատունէն) կը պատրաստուի յառաջիկայ 30 Մարտին Թուրքիոյ մէջ տեղի ունենալիք ՏԻՍ-ի (Տեղական ինքնակառավարման մարմիններ) ընտրութիւններուն մասնակցելու: Ըստ իրեն՝ Թուրքիոյ Արեւմտեան նահանգներուն մէջ ընտրութիւններուն իր թեկանծութիւնը ներկայացուցած Քրտական HDP կուսակցութիւնը իրմէ բացի նաեւ այլ հայ թեկանծուներ ներկայացուցած է:

Գայուշ Չալըքման կը պատմէ նաեւ, որ Թուրքիոյ քաղաքական կեանքին մասնակցել սկսած է նախ անդամակցելով «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» կուսակցութեան, որուն հետ բաւական երկար ճամբայ կտրած է: Գայուշ Չալըքման ներկայիս մաս կը կազմէ HDP կուսակցութեան, որուն միացած են քիւրտեր, յոյներ, ալեւիներ, ասորիներ եւ հայեր: Վերջերս կուսակցութեան շարքերը համալրուած են աշխատատեղական տարբեր սէնտիքաներու անդամներով, քրտական փոքր խմբակցութիւններով եւ հայկական «Նոր Ջարթօնք» կազմակերպութեամբ: Տիկին Չալըքման նաեւ նշեց որ կուսակցութիւնը ներկայիս ունի թիւրքմէն առաջնորդ մը, որ ըստ իրեն հայասէր անձնաւորութիւն է: Յիշեցնեմ որ HDP «Ժողովուրդներու Ժողովրդավարական Կուսակցութիւն» անուանումի թրքերէն խորագրին առաջին երեք սկզբնատուներուն խտացումն է:

Ստորեւ հարցազրոյցը՝ Տիկին Չալըքման HDP կուսակցութիւնը որուն անդամ էք նաեւ դուք, արդեօ՞ք ամբողջ Թուրքիոյ տարածքին պիտի մասնակցի ՏԻՍ-ի ընտրութիւններուն:

-Ոչ, խորքին մէջ Մարտին տեղի ունենալիք ընտրութիւններուն Թուրքիոյ արեւելեան նահանգներուն մէջ քրտական միւս կուսակցութիւնները պիտի

մասնակցին, իսկ իր թեկանծուները պիտի ունենայ Թուրքիոյ արեւմտեան նահանգներուն մէջ:

-Պուք ձեր թեկանծութիւնը դրած էք «Իշխանաց կղզիներու» քաղաքապետի պաշտօնին համար: Կրնա՞ք պատմել այս մասին:

-Նախ ըսեմ որ «Իշխանաց կղզի» ըսելով պէտք է հասկնանք որ այդ շրջանը կ'ընդգրկէ ինը կղզիներ, որոնց վեցը մարդաբնակ են, անոնցմէ երկուքը կը պատկանին անհատի մը, իսկ 9-րդը համագործակցական միութեան մը կը պատկանի:

-Իսկ այս կղզիներուն մէջ հայեր կա՞ն:

-Այո՛ կան: Պատկերացուցէք որ կղզիներէն մին կը կոչուէր «Հայերու կղզի» որ յայտնի «Գնալը» կղզին է: Հոն մենք ունինք եկեղեցի եւ մօտիկ անցեալին նոյնիսկ դպրոց մը կը գործէր: Առաջ աւելի ազդու էր հայերու ներկայութիւնը այդ կղզիին վրայ:

Յաւօք այսօր «Հայերու կղզի» ըլլալու հանգամանքը կորսնցուցած է կղզին:

-Իսկ որո՞նք են ձեր մրցակիցները:

-Հոն երկու մրցակից ունիմ, որոնք Թուրքիոյ երկու գլխաւոր կուսակցութիւնները (AKP եւ CHP) կը ներկայացնեն: Կարծեմ գիտէք որ AKP-ն էրտողանի կուսակցութիւնն է: Արդարութիւն եւ Ջարգացում կուսակցութիւն:

-Իսկ միւսը Քէմալիստներու կուսակցութիւնն է՞:

-Այո, բայց խորքին մէջ իրենք ալ չեն գիտեր իրենց ինչ ըլլալը ու յստակ ալ չէ թէ ինչ կը հետապնդեն: Իրականութեան մէջ Աթաթուրքին հիմնած կուսակցութիւնն է:

-Իսկ ո՞րն է աւելի ուժեղ թեկանծուն այս երկուքին մէջ:

-Քէմալիստը (CHP-Ս. Ա.) շատ բան չի ներկայացներ ու կրնամ ըսել որ բաւական թույլ է: Իսկ ինչ կը վերաբերի երկրորդին բաւական լուրջ մրցակից մըն է որ կրնայ նեղը դնել գիս: Եւ ըսեմ նաեւ որ ընտրուելու հաւանականութիւնները բարձր են:

-Ինչպէ՞ս կրնաք մանրամասնել:

-Եթէ կ'ուզէք որ անկեղծ արտայայտուիմ ըսեմ, որ եթէ կղզիի հայերը ինծի քուէարկեն, ես կրնամ յաջողութեան հասնիլ:

-Եւ վստահ Չայերը ձեզի պիտի քուարկեն չէ՞:

-Ոչ կը սխալիք: Յաւօք մինչեւ այս պահը իմ ունեցած տեղեկութիւններս կ'ըսեն որ հայերուն մեծամասնութիւնը իրենց քուէները պիտի տան էրտողանի կուսակցութեան թեկանծուն:

-Բայց ինչո՞ւ:

-Որովհետեւ հայերը վարժ են իրենց քուէները իրենց դահիճին տալու ..

(Կը լռենք պահ մը)

Գիտէք ես բազմաթիւ գաղութներ այցելած եմ ու եթէ ճիշդը կ'ուզէք լսել պէտք է գիտնաք որ Պոլսոյ հայերը շատ ծանր ճնշումներու տակ էին մօտիկ անցեալին ու կը շարունակեն մնալ: Ասիկա պետական մշակուած քաղաքականութեան արդիւնքն է:

-Իսկ վերջին տարիներուն երե-

ւելի փոփոխութիւններ չեղա՞ն Պոլսոյ եւ առհասարակ Թուրքիոյ մէջ:

-Ըսեմ որ վերջին տարիներուն պոլսահայութիւնը ցնցում մը ապրեցաւ: Յատկապէս Հրանդի սպանութեան դէպքէն ետք: Մնացած պատմութիւնը վստահ եմ գիտէք: «Թաքնուած» հայեր սկսան իրենց ինքնութիւնը որոնել ու վերադառնալ իրենց արմատներուն: Իսկ կէթոյի մէջ ապրողները սկսան դուրս ելլել փակ շրջանակէն: Բայց ցաւօք, ու նոյնիսկ այդ հատուածին մօտ այդ բացուելու ընթացքը անոնք սխալ հունով տարին: Բացուելը քաղաքական չէր այլ ընկերային: Կը պարզէ՞ք քիչ մը:

-Այսօր մեծ տոկոս կը կազմէ հայերու եւ թուրքերու միջեւ ամուսնութիւններու պարագան: Ու կարծէք հայերը կը սպասէին այս առիթին որպէսզի այդ ընտրանքին երթային: Առաջ նուազ էր թուրքերու հետ կնքուած ամուսնութիւններու քանակը, բայց ներկայիս պատկերացուցէք որ Պոլսոյ մէջ թուրքերու հետ ամուսնութիւնները հասած են 80 տոկոսի: Ծանր թող չհնչէ ըսածս, բայց Հրանդի սպանութիւնը կարծէք սխալ ընկալուեցաւ եւ անոր մահէն ետք մարդիկ աւելի ազատ զգացին ու կը զգան թուրքերուն հետ ամուսնութիւն կնքելու:

-Ինչպէ՞ս ընկալուեցաւ ձեր թեկանծութիւնը պոլսահայութեան կողմէ:

-Ճիշդը տակաւին կանուխ է այդ մասին խօսիլ: Բայց օրինակ մամուլին մասին խօսելով մէկ բան յստակ է, որ բացի «Ակօս» թերթէն հայկական միւս թերթերը («Ժամանակ» եւ «Մարմարա» Ս.Ա.) նոյնիսկ անհանգիստ են իմ թեկանծութեան: Կրնա՞ք պատկերացնել: Երեւի թելադրուած իրենց շահերէն այս կեցուածքը որդեգրած են: Հասկնալի է որ «Գոնֆոնմիստ» (համակերպող)

Մար. ք էջ 18



ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
99ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

Կազմակերպութեամբ՝ Փասատինայի Չայ Չամագաղութային Մարմինի

Յինգզաբթի, Ապրիլ 24, 2014
Փասատինայի Քաղաքապետարանին Առջեւ
 100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101 • Առաւօտեան ժամը 10:00-ին

COMMUNITY COMMEMORATION
FOR THE 99TH ANIVERSARY
OF THE ARMENIAN GENOCIDE OF 1915

Presented by Armenian Community Coalition of Pasadena

Thursday, April 24, 2014, at 10:00am
 In front of Pasadena City Hall – 100 N. Garfield Ave., Pasadena, CA 91101

ՔԵՍԱՊԸ ՊԱՐՊՈՒԵՑԱԻ, ՔԵՍԱՊԸ ԿԸ ՎԵՐԱՎԱՆԳՆԻ

22 Մարտ 2014-ին, առաջուկ-եան կանուխ ժամերուն Թուրքիոյ տարածքէն Սուրիոյ վարչակարգի հակառակորդ զինեալ խմբաւորումներու՝ Քեսապի եւ շրջակայ բնակավայրերուն ուղղութեամբ կատարած լայնածաւալ եւ բուռն յարձակման հետեւանքով, շրջանի հայ բնակչութիւնը ստիպողական տարահանումի ենթարկուեցաւ զէպի Լաթաքիա:

Լաթաքիայէն հաղորդուած տեղեկութիւններու համաձայն, յարձակման ընթացքին որեւէ հայազգի զոհ չէ արձանագրուած, եւ հայ բնակչութիւնը՝ մօտաւորապէս 1500 մարդ, անվտանգ կարողացած է ապաստանիլ Լաթաքիա: Անոնց շարքին կը գտնուին նաեւ Հայկական եւ պատերազմական գործողութիւններու թատերաբեմ դարձած սուրիական այլ բնակավայրերէ որոշ հայրեր, որոնք ապաստանած էին Քեսապ, իբրեւ յարաբերաբար աւելի ապահով վայր: Տարահանուածներու մեծամասնութիւնը տեղաւորուած է տեղի հայկական ընտանիքներու՝ ազգականներու եւ բարեկամներու տուններուն մէջ, իսկ մօտ 250 անձ պատասպարուած է քաղաքի հայ առաքելական եկեղեցւոյ գոյգ սրահներուն մէջ:

Լաթաքիոյ հայկական համայնքի ներկայացուցիչները հաղորդեցին, որ տեղի միութիւնները եւ կազմակերպութիւնները աշխուժօրէն գործի լծուած են, ապահովելու համար տարահանուած հայրենակիցներու կենցաղային բոլոր կարիքները:

Հայ համայնքի պատասխանատուները գորաշարժի ենթարկած են նաեւ քաղաքային եւ նահանգային տարբեր կազմակերպութիւններ, բարեսիրական միութիւններ եւ պետական հաստատութիւններ, ինչպէս նաեւ անհատ բարերարներ, օգնութեան ձեռք մեկնելու համար անոնց: Քեսապի հայ կաթողիկէ եկեղեցւոյ ժողովրդապետ հայր Նարեկ վրդ. Լուիսեան կը գտնուի իր հօտին գլուխը՝ տարապայման այս կացութեան մէջ գտնեալներու համար տալիս պահանջարկ մարդիկը եւ մասնակցելու համար անոնց կարիքներու բաւարարման ուղղուած աշխատանքներուն:

Քեսապի եւ շրջակայ շուրջ մէկ տասնեակ հայկական գիւղերու բնակչութեան տարահանումը անազանազան իրողութիւն է՝ մարդկային եւ ազգային առումներով:

Անիկա մէկ արտայայտութիւնն է Սուրիոյ մէջ սանձագերծուած վայրագ պատերազմի արիւնալի

արհաւիրքին, որուն կ'ենթարկուին անմեղ մարդիկ, բռնօրէն դուրս մղուելով իրենց պապենական բնակավայրերէն, կորսնցնելով սերունդներու արդար աշխատանքով ձեռք բերուած տունն ու այգին եւ նիւթական բոլոր կարողութիւնները, մատնուելով անստոյգ ապագայի առթելիք բազում մտատանջութեանց եւ տագնապ ներուն:

Քեսապը առաջին անգամ չէ որ կը մատնուի նման արհաւիրքի, սակայն քեսապցիք միշտ ալ կարողացած են ոտքի կանգնիլ հարուածներէն եւ վերաշինել իրենց հայրենի բնակավայրը:

Վերջին մօտ հարիւր տարուայ պատմութեան մէջ, այս իմաստով կ'առանձնանան երեք թուականներ՝ Քեսապը ծանր կորուստներ կրեց 1909 թուականին Օսմանեան Թուրքիոյ կողմէ իրագործուած կիլիկիոյ հայերու կոտորածին ընթացքին, մինչ 1915-ին, նոյն Թուրքիոյ կառավարութեան հրամանով անոր բնակչութիւնը եւս տարագրուեցաւ զէպի Տէր Չօրի եւ Յորդանանի անապատներ, ուր նահատակի մահով ինկան շուրջ 5000 քեսապցիներ: Հայկական ցեղասպանութեան միւս գոհերուն հետ միասին: Իսկ 1939-ին, Քեսապ ջղողեցաւ գերծ մնալ Քեմալական Թուրքիոյ նկրտումներէն եւ պահպանուեցաւ Սուրիական Հանրապետութեան սահմաններուն մէջ, մինչ Ալեքսանտրեթի սանձաքը, ուր կը գտնուէին նաեւ Մուսա լերան-Սուէտիոյ հայկական բնակավայրերը, թուրք-ֆրանսական համաձայնութեամբ կցուեցան Թուրքիոյ: Այդ իրագործումին մէջ մեծապէս դերակատար եղան Ֆրանսայի հայկական համայնքը, կարտինալ Աղաճանեան, իր լուռ բայց խիստ ազդու միջամտութիւններով, եւ նոյնինքն Հռոմի պապը, որ ի գործ դրաւ իր ամբողջ հեղինակութիւնը՝ Քեսապը Թուրքիոյ չյանձնելու համար:

Քեսապը հայկական սփիւռքի եւ ամբողջ հայութեան համար ունի անզուգական կարեւորութիւն: Քեսապի հողն ու ջուրը, քեսապցիներու աւանդազրոյծ հայկական ընտանիքներն ու ազգային-եկեղեցական կառույցները հայրութեան նուիրաբերած են բազում գործիչներ, բոլոր բնագաւառներուն մէջ, որոնք պարծանք բերած են ամբողջ հայութեան եւ օրինակելի մարդիկ ու քաղաքացիներ եղած են իրենց ապրած բոլոր երկիրներուն մէջ:

Մար.ը էջ 18

ԹՈՒՐԲԻՈՅ ԱՆՊԱՐԿԵՇՏ ՄՊԱՌՆԱԼԻՔԸ ՍՈՒՐԻՈՅ՝ ԶՆԱԳՈՅՆ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՍԸ ԶԱՐՑՈՎ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆոնիա Քուրիըր» թերթի
հրատարակիչ եւ խմբագիր

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմեթ Տաւութօղլուի սպանալիքը, որ վրէժ պիտի լուծէ Սուրիոյ մէջ ունէ մէկէն, որ կը յանդգնի վնասել Օսմանեան կայսրութեան հիմնադիր, Օսմանի մեծ հայր՝ Սուլէյման շահի դամբարանը, թրքական կառավարութեան կեղծաւորութեան վերջին դրսեւորումն է:

Ահա երկիր մը, որ ցեղասպանութեան ենթարկած է իր միլիոնաւոր քրիստոնէայ հպատակները (հայեր, ասորիներ եւ յոյներ), բռնագրաւած է անոնց ունեցուածքը, գաւթած անոնց հողերը, աւերած հազարաւոր եկեղեցիներ, գերեզմանատուներ եւ մշակութային յուշարձաններ, եւ տակաւին կը յանդգնի գոռաշարժել սուրիացիները՝ նախքան հնագոյն օսմանեան գերեզմանի մը որեւէ վնաս հասցնելը:

Թէեւ ամէն մարդու գերեզման արժանի է պաշտպանութեան եւ յարգալից վերաբերմունքի, սակայն Տաւութօղլուի սպանալիքը անհիմն արդարացում է Սուրիոյ ներքին գործերուն միջամտելու համար: Ճակատագիրի հեզանքով, Սուլէյման շահի գերեզմանը կը գտնուի այնպիսի տարածքի մը մէջ, որ կը վերահսկուի ոչ թէ սուրիական կառավարութեան, այլ «Քալիտա»-ի ջիհատականներու եւ այլ ապստամբ խումբերու կողմէ, որոնց կ'օգնէ եւ կը գինէ Թուրքիան՝ Պաշտա Ասատի վարչակարգը տապալելու համար: «Քալիտա»-ի զինեալները, որոնք օսմանեան դամբարանի տարածքին բախումի մէջ են հակակառավարական այլ խմբաւորումներու հետ, իրենք է, որ կ'ոչնչացնեն գերեզմանները, քանի որ արմատական իսլամականները կը կարծեն, թէ շիրիմներու պաշտամունքը կուսակալութիւն է:

Սուրիոյ մէջ գտնուող հողատարածքը, ուր Սուլէյման շահի դամբարանը կայ, Թուրքիոյ կողմէ կը նկատուի ինքնիշխան թրքական տարածք, համաձայն 1921 թուականի Անգարայի պայմանագրին՝ ստորագրուած Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ, որ այդ ժամանակ գրաւած էր Սուրիան: Ըստ այդ պայմանագրին, Թուրքիան իրաւունք ունէր այդ վայրին մէջ պահակախումբ տեղակայել եւ բարձրացնել իր դրօշը: 1921 թուականէն սկսեալ երկու տասնեակ

թուրք զինուորականներ շուրջօրեայ դրութեամբ կը հսկեն դամբարանը:

Անգարայի պայմանագրի 9-րդ յօդուածով Թուրքիոյ յատկացուած է 8000 քառ. մետր մակերեսով սուրիական տարածք՝ Թուրք-սուրիական սահմանէն 80 քմ. դէպի հարաւ: Երբ 1974 թուականին գերեզմանի շրջակայ տարածքը ողողուեցաւ նորակառուց «Ասատ» լիճի ջուրերով, գերեզմանը տեղափոխուեցաւ Թուրքիոյ սահմանէն 35 քմ. հեռաւորութեան վրայ գտնուող այլ վայր մը: Հակառակ Սուրիոյ մէջ տեղի ունեցող ռազմական գործողութիւններուն՝ Թուրքիան կը շարունակէր իր գորախումբը պահել գերեզմանին մօտ:

Թուրքիոյ այս հինաւուրց վայրին նկատմամբ տարածքային իրաւունքներ տալու փոխարէն՝ Ֆրանսան ձեռք բերաւ շարք մը տնտեսական գիշուներ, որոնց շարքին՝ իրաւունք, որով ֆրանսական ընկերութիւնները կարենան տնօրինել երկաթուղային երթեկութիւնը թրքական տարածքին մէջ եւ շահագործել երկաթի, քրոմի ու արծաթի հանքավայրերը յառաջիկայ 99 տարիներուն: Այս վիճելի փոխգիշումը օրինական չի կրնար նկատուիլ միջազգային իրաւունքի տեսանկիւնէ, քանի որ գաղութարար պետութիւնը կը փոխանակէ ուրիշի մը տարածքը:


1921 թուականի պայմանագրով նաեւ սահմանուած էր «յատուկ վարչակարգ» Ալեքսանտրեթի շրջանին մէջ ապրող թուրքերու համար, որ ֆրանսական հովանաւորութեան տակ գտնուող սուրիական տարածք էր: 1939 թուականին Ալեքսանտրեթը ամբողջութեամբ անջատուեցաւ Սուրիայէն եւ պաշտօնապէս կցուեցաւ Թուրքիոյ՝ իբրեւ Հայթայի գաւառ: 1946 թուականին Ֆրանսայէն իր անկախութիւնը ձեռք բերելէն ետք Սուրիոյ կառավարութիւնը ճանչցաւ Թուրքիոյ ինքնիշխանութիւնը այն տարածքին առնչութեամբ, ուր կը գտնուի Սուլէյման շահի դամբարանը, սակայն երբեք չընդունեց Ալեքսանտրեթի յանձնումը Թուրքիոյ:

Արտաքին գործոց նախարար Տաւութօղլուն անցեալ ուրբաթ Վան քաղաքի մէջ կայացած մամուլի ասուլիսի մը ընթացքին զգուշացուց, որ որեւէ յարձակում Սուրիոյ մէջ գտնուող օսմանեան ժամանակաշրջանի գերեզմանին վրայ «սուր-

Մար.ը էջ 18


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> - Life Insurance - Health Insurance - Group & Individual - Long Term Care - Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> - Estate Planning - Will & Living Trust - Full Annual Review - Mortgage Protection - College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> - Workman's Compensation - Employee Benefits - Annuity - IRA - 401K & 403B
--	---	---



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Ածիրածեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ՀԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ (OPEN HOUSE) ՀՐԱԴԻՐԸ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը նախաձեռնած է հրապարակային ընդունելութիւն մը՝ մեր համայնքի բոլոր անդամներուն համար անխտիր, կիրակի, Ապրիլ 6ին, ժամը 1-4, ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոնին մէջ, 2495 E. Mountain Street, Pasadena: Այս նախաձեռնութեան նպատակն է հանրութիւնը տեղեակ պահել ՀԲԸ Միութեան գործունէութեան մասին եւ զարկ տալ նոր անդամագրութեան: Հանդիպման ընթացքին լոյսի տակ պիտի առնուին ՀԲԸ Միութեան առաջադրած այլազան ծրագիրները, որոնք ներկայիս դրուած են համայնքի տրամադրութեան տակ եւ որոնք կ'ընդգրկեն սկստական, մարզական, երիտասարդ արհեստավարներու (young professionals): Յաջորդ Սերունդի առաջնորդութեան (GenNext mentorship), Սթիվենսոնի թատերախումբի, ամառնային ճամբարի, արուեստի եւ մշակութային յանձնարումների, շրջանաւարտից միութիւններու, մասնաւոր ձեռնարկներու եւ կանանց յանձնարումներու ոլորտները:

«Հայերը գիտեն ՀԲԸՄ-ը, որպէս 108 տարեկան բարեգործական միութիւն մը», ըսաւ Գրիգոր Գարակէօզեան, ատենապետը ՀԲԸ

Միութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջ. Վարչութեան: «Ապրիլ 6ին կը հրաւիրենք հայ համայնքը այցելելու մեր հրապարակային ընդունելութեան եւ ծանօթանալու ՀԲԸՄ-ի 20 արտակարգ ծրագիրներուն ու յանձնարումներուն:

Հանրութիւնը առիթ պիտի ունենայ հետեւելու ՀԲԸՄ-ի տարբեր ծրագիրներուն յատկացուած բաժիններու (stations set up), հարցումներ հարցնելու անոնց գործօն մասնակիցներուն, դիտելու անցեալի ձեռնարկներէն ներկայացումներ (presentations), անդամակցութեան դիմում կատարելու: Տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն:

1906ին Գահիրէի մէջ հիմնուած ՀԲԸՄ.ը (Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն - www.agbu.org) աշխարհով մէկ սփռուած, ոչ-շահաբեր ամենամեծ կազմակերպութիւնն է, իր կեդրոնատեղին ունենալով Նիւ Եորք քաղաքին մէջ: Տարեկան 36 միլիոն տոլարի իր պիւտձէով ան կը պահպանէ եւ զարկ կու տայ հայկական ինքնութեան եւ ժառանգութեան՝ կրթական, մշակութային, մարդկայնական եւ երիտասարդական ոլորտներու մէջ, ամէն տարի 400,000 հայերու կեանքերուն հետ առնչուելով վեց ցամաքամասերուն վրայ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել ՀԲԸ Միութեան

ՄԱՐԶԱԿԱՆ ՎՆԱՍՈՒԱԾՔՆԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ



19 Մարտ, 2014, Չորեքշաբթի օր, Բժ. Ռաֆֆի Պալեան ՀԲԸ Միութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական վարժարանի 10րդ դասարանի յառաջադէմ խումբի աշակերտներուն շատ շահեկան դասախօսութիւն մը տուաւ. «Մարզական վնասուածքներ»: Դասախօսութեան նպատակն էր մեր երիտասարդ մարզիկ եւ մարզուհիներուն ծանօթացնել այն մկանային եւ ձգտանային վնասները, որոնք կողովազնդակ, ցանցազնդակ եւ թէնիս խաղալու ժամանակ կրնան պատահիլ: Բժ. Պալեան իր դասախօսութեան ընթացքին ցոյց տուաւ ուշադրաւ սահիկներ:

մանակ փորձանքներէ խուսափելու համար Պարոն Պալեանը աշակերտներուն խրատեց խաղերէն առաջ մարմինը միշտ «տաքցնել», իսկ անփափաքելի արկածի մը պարագային՝ անմիջապէս գործադրել R.I.C.E. շտապօգնութեան միջոցը. R-Rest-Հանգիստ, I-Ice-Սառ, C-Compression-Ճնշում եւ E-Elevation-Բարձրացում:

Պարոն Ռ. Պալեան մեր վարժարանի նախկին ծնողներէն է՝ երկու անգամ: Յարգելի բժիշկը ամէն տարի իններորդ դասարանի յառաջադէմ խումբի աշակերտներուն նուիրաբար կը խօսի թոքախտի մասին, երբ անոնք Միսաք Մեծարենցի բանաստեղծութիւնները կ'ուսումնասիրեն:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԻ (FLOAT) ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՈՒԹԵԱՒ ՈՐ ՄԱՍ ԿԱԶՄԵ ԾԱՂԻԿՆԵՐՈՒ 126ՐԴ ՓԱՌԱՏՕՆԻՆ

Ամերիկեան Հայկական Ծաղկասալի (Float) Ընկերութիւնը (AARFA) հպարտ է յայտարարելու, թէ ընդունուեցաւ մաս կազմելու Ծաղիկներու 126րդ փառատօնին որ տեղի պիտի ունենայ Յունուար 1, 2015-ին: Այս սքանչելի մարտահրաւէրով, ծրագիրը մեծ վստահութիւն ներշնչեց AARFA-ին: Շնորհիւ ընկերութեան անդամներուն եւ անոր թիկունքին նեցուկ կայնողներուն, ծաղկասալը մեծ յաջողութիւն պիտի գտնէ:



Ծաղիկներու Փառատօնին Ծագումը

Ծաղիկներու Փառատօնը սկսաւ որպէս նպաստացուցիչ ճիգ մը կատարուած՝ Փաստինայի ճանչցուած Valley Hunt Club-ի կողմէն: 1890-ի ձմեռը, այս գլխաւին անդամները հրաւիրեցին Արեւելեան Ափի իրենց նախկին դրացիները որ գան Գալիֆորնիոյ աւելի տաք նահանգը՝ տօները անցընելու: Այս առիթը խաղեր պիտի դիտէին ուր տեղի պիտի ունենային ճիակառքերու մրցումներ, Փօլօ, քայլարշաւի մրցոյթներ եւ այլ խաղեր: Շնորհիւ Գալիֆորնիոյ բարեխառն եղանակին եւ նորաբոյս ծաղիկներու առատութեան, գլխաւը որոշեց այս տօնակատարութիւններու վրայ աւելցնել մէկ ուրիշ միջոցառում մը՝ հարիւրաւոր ծիլ ծաղիկներով զարդարուած կառքերու փառատօն մը: Այսպէս սկսաւ աշխարհահռչակ Ծաղիկներու Փառատօնը:

պատմութիւններ ունի բաժնեկցելիք ամերիկահայ գաղութի հետ որ մեծապէս նպաստած է այս Երկրի բարգաւաճման: Մեծ պատիւ է որ մեր տոհմային պատմութիւնները աշխարհի փոխանցենք 2015-ի Ծաղիկներու Տոգանցքին:

AARFA-ին Օգնեցէք Որ Զեր Պատմութիւնը Տեսանելի Դարձնէ Ծաղկասալը կը պատկանի Միացեալ Նահանգներու եւ աշխարհի հայերուն: Հարիւր տարի առաջ, Ծաղիկներու Տոգանցքը ընտրած էր Ամերիկահայ մը՝ Պր. Փաշեանը որպէս Կրան Մարշըլ (Grand Marshall), եւ այսօր, ամերիկահայութիւնը վերջապէս պիտի մասնակցի իր անձնական ծաղկասալով:

Մեր յոյսն է որ աշխարհատարած հայ համայնքները աջակցին այս ծաղկասալի յաջողութեան եւ օգնեն ամերիկահայ գաղութի ներշնչող պատմութիւնները տարածելու: AARFA կարիք ունի որ կազմակերպութիւններ, լրատու գործակալութիւններ եւ անհատներ օժանդակեն այս ծրագրի յաջողութեան եւ զայն հովանաւորեն:

Տեղեակ մնալու համար՝ այցելեցէք հետեւեալ կայքէջը՝ <http://aarfa.org/>:

2015-ի Թեման
Այս երեւոյթները մեր պատմութեան անցած «սեւ» փորձառութիւններուն հետեւանքներն են՝ հայութեան եւ հայրենիքի վրայ կատարուած յարձակումներ, տեղահանութիւններ, իսկ ամէնէն ասաւորը՝ ցեղասպանութիւն, հայրենի հողէն արմատախիլ ըլլալ, կորսնցնել Արեւմտահայաստանն ու Կիլիկիան: Յրուեցանք քիչ մը ամէն տեղ, թէեւ կրկին կազմաւորուեցանք եւ կազմակերպեցինք մեր սփիւռքեան կեանքը, բայց մնաց ու տակաւին դամոկլեան սուրի նման մեր վերեւ կախուած կը մնայ ձուլումի ու ալյասերումի երեւոյթն ու վտանգը, իսկ ասոնց իբրեւ հետեւանք՝ լեզուն եւ արմատներուն կառչածութիւնը կորսնցնելու իրավիճակը:

Ֆայեզ ժըրժեսը ծնած է Պաղտատ, 1966-ին: Մօրը՝ Էլ-Լիւի ընտանիքը եղած է հայ, որ Մարտինի տեղահանուած է Ցեղասպանութենէն ետք եւ հաստատուած՝ Պաղտատ, Իրաք: Կարելիութեան սահմաններուն մէջ Էլ-Լիւի փորձած է հայ մեծնալ, բայց իրեն վիճակուած է ամուսնանալ տեղացիի մը հետ եւ կազմել բազմանդամ ընտանիք մը՝ հինգ զաւակներէ բաղկացած: Ֆայեզ միակ մանչ զաւակն է՝ չորս քոյրերու կողքին:

Ֆայեզ չէ ճանչցած իր հայրը: Երեք ամսուան էր, երբ իրաքցի հայրը կորսնցուցած է եւ ճաշակած է որբ մեծնալու դառն իրականութիւնը: Բայց ասիկա թափ տուած է մօրը, որ պէտք է ֆայեզին դաստիարակութեան մէջ աւելի արմատանայ հայկական ինքնութիւնը: Այսպիսով կը սկսի Ֆայեզի հայկական ինքնութեան ճանաչման եւ կազմաւորման գործընթացը:

1970-ական թուականներուն փոքր պատանի Ֆայեզ կը հասնի Այնճար՝ Լիբանան եւ կ'ընդունուի հայ կաթողիկէ վարժարան՝ իբրեւ գիշերօթիկի սան: «Այնճարը եղաւ

իմ հայկական ինքնութեանս կերտումին կարեւոր շրջանը: Հոն է, որ սրտիս ու հոգիիս մէջ լեցուեցաւ հայուն հպարտութիւնը» կ'ըսէ Ֆայեզ: Իսկ հպարտութիւնը՝ Ֆայեզի անգիր ըրած առաջին փոքր բանաստեղծութենէն փոխանցուած է. «Հայ եմ ես, հայ եմ ես, քաջ վարդանին թոռն եմ ես»: Վարդանի թոռը ըլլալու գիտակցութեամբ եւ հայերէն տառերն ու լեզուն սորվելու իրողութեամբ, գէթ սկզբնական շրջանին, Այնճարը կարեւոր դեր կ'ունենայ Ֆայեզի կեանքին մէջ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին (1975-1976) Ֆայեզ ստիպուած կ'ըլլայ վերադառնալ Պաղտատ: Իրաքի մէջ փորձառութիւնը կ'ըլլայ խառը: Կ'անջատուի հայութենէն, սակայն ատրիակ «դիտումնաւոր չէր», կը շեշտէ Ֆայեզ: «Կեանքի պայմանները շատ դիւրին չէին, Իրաքի մէջ որպէս հայկական գաղութ՝ շատ մեծ կարելիութիւններ չունէինք», կը շարունակէ ան: Ֆայեզ այսօր տակաւին կրնայ հայերէն կարդալ, բայց բառամթերքը եւ անոնց նշանակութիւնը բաւական մոռցած է:

1995-ին Ֆայեզ կ'ամուսնանայ Նաուալիին հետ, կը կազմեն ընտանեկան բոյն մը: Նաուալը հայկական Թիւֆենքճեան ընտանիքէն է, անոր ծնողները Ցեղասպանութենէն ետք հաստատուած են Իրաքի հարաւային շրջաններ: Նաուալ եւ իր ընտանիքը մաս կը կազմեն արաբացած հայերու խմբակին:

Ֆայեզի, նաեւ՝ Նաուալի, ցաւը կը սկսի, երբ կ'ունենան իրենց անդրանիկ մանչ զաւակը: Ան կը ծնի անկար ու հիւանդ: Ֆայեզ, որ արդէն ճաշակած էր որբութեան եւ առանց հօր գուրգուրանքի կեանքը, կը տազնապի իր զաւակին հիւանդագին վիճակին ի տես: Իր զաւակին առողջական այդ տազնապալի վիճակին հետ կը սկսի մեծնալ նաեւ Ֆայեզի ցաւը:

Սակայն Ֆայեզի ցաւը զինք չառաջնորդէր յուսահատութեան եւ յուսալքումի: Ան սորված էր, որ «վարդանի թոռն է», եւ թէ ինք «Քաջ հայն է»: Ու տակաւին. «Մայրս մեզի պատմած էր տեղահանութեան ընթացքին իր ծնողաց կրած գրկանքներուն մասին», կ'ըսէ Ֆայեզ: Ուստի կարելի չէր, որ «Ես յուսահատ էի, երբ իմ մեծ ծնողքս կրցան ապրիլ այդ բոլոր կոտորածներէն ետք»:

Ֆայեզ կը գիտակցի, թէ իր ցաւի կեանքը պէտք էր վերածել նուիրականութեան, ծառայութեան՝ հաւաքական աշխատանքի համար:

Շաբ.բ էջ 19

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՊԱԼԱՄԱՆՏ ԶԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԱՐԵՎՍԱԶԱՅԵՐԷՆԻ ՊԱՅՊԱՆՈՒՄԻ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Երեքշաբթի 11 Մարտ, 2014-ին, Լիբանանի Պալամանտ Համալսարանի Բանասիրական Բաժանմունքը կազմակերպեց դասախօսութիւն մը: Նիւթը՝ «Արեւմտահայերէնի վտանգուած վիճակը արդեօք կը մտահոգէ՞ բոլոր Լիբանանցիները»: Դասախօսն էր ընկերալեզուաբան՝ Դոկտ. Արտա Ճէպէճեան, որուն ուսումնասիրութիւնը կեդրոնացած է արեւմտահայերէնի վտանգուած կարգավիճակին եւ անոր պահպանումի անհրաժեշտութեան վրայ:

Դոկտ. Ճէպէճեան իր ելոյթը սկսաւ մատնանշելով աշխարհի վրայ գոյութիւն ունեցող 6000 լեզուներէն 3000-ին նախատեսուած անհետացումը 21-րդ դարուն ընթացքին: Ան բացատրեց UNESCO-ի չափանիշները լեզուի մը վտանգուած կարգավիճակ ստանալու նկատմամբ: «2012-ի Փետրուարին, UNESCO-ի վտանգուած լեզուներու Ցանկին վրայ արեւմտահայերէնի գետեղումը ահազանգ մըն

է, որ հիմնուած է երեք տուեալներու վրայ՝ խօսողներու տարիք, խօսողներու թիւ եւ սերնդական փոխանցումի վրայ: Այս իմաստով արեւմտահայերէնը դասուեցաւ որպէս անպայման վտանգուած՝ (definitely endangered) ինչ որ կը նշանակէ, թէ արեւմտահայերէնը կրնայ կորսուիլ յաջորդ 100 տարիներուն», -ըսաւ ան:

Դոկտ. Ճէպէճեան ապա ներկայացուց իր ուսումնասիրութիւնը եւ անոր բաղկացուցիչ մասերը: Ան վեր առաւ հայ հաւաքականութեան Լիբանան հաստատուելու պարագան եւ այդ որպէս արդիւնք Ցեղասպանութեան: Դասախօսը անդրադարձաւ այն իրողութեան, թէ ինչպէս հայը ինքզինք «կղզիացուց լիբանանեան հաւաքականութեան մէջ, որովհետեւ կար հրամայական մայրենի լեզուի պահպանումին»: «Հայը ընկերային եւ մշակութային կապերը ոչ հայերու հետ

Շաբ.բ էջ 19


ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ՆՈՒԻՐՈՒՄԸ
ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 94-ՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻՆ

Կազմակերպութեամբ՝
ԱՅՆԹԱՊԻՑԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Գլխաւոր լեզուագէտ
ՏՕՐԹ. ՌԱՖԻ ԴԱՍԱԽԱՆԵԱՆ
կղզի պիտի ունենայ նաև
Հայրենի Թանգարանի արտնայնագէտ՝
ՇԱՀԷՆ ԽԱՉԱԾՈՒՐԻԱՆ
Աշխարհամոլ ճկարիչ ՅԱՆՈՐ ՑԱԿՈՒՐԻԱՆԻ յիշատակին

Կիրակի, Ապրիլ 6, 2014, կեսօրէ ետք ժամը 5:00-ին
Կղզեակի Սր. Գրիգոր Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ «Գոյումճեան» սրահին մէջ
1510 E. Mountain St., Glendale, CA 91207

ՀԻՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԾԽՈՎ ՀՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԷՔ ԲՈՒՆՈՒԿ


ARMENIAN AINTABTZZY CULTURAL ASSOCIATION
Presents
THE 94TH ANNIVERSARY COMMEMORATION OF AINTAB HEROIC RESISTANCE

Keynote Speaker
DR. RAFFI BALABANIAN
and
World Renowned Painter
HAGOP HAGOPIAN MEMORIAL
By Art Historian
SHAHEN KHATCHADOURIAN

Sunday, April 6, 2014, at 5:00 p.m.
St. Gregory Armenian Catholic Church - Kouyoumjian Hall
1510 E. Mountain St., Glendale, CA 91207

RECEPTION ALL ARE WELCOME
Visit the Aintabtzzy web page: www.noraintab.org

ՀԱՅՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՅԵՏՄԱՅՈՒ ԳՈՂԳՈԹԱՆ (ԻՐԱՊԱՏՈՒՄ)

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿԵԱՆ
Գրող, հրատարակագիր
«Ուկե գրիչ» մրցանակի
դափնեկիր

Այսպես չպետք է սկսուէր այս պատմութիւնը, բայց եթէ արդէն սկսուել է, հեղինակն ինչ կարող է անել:

Ծննդեան տարեդարձի առաջօրեան Սեղբոս Ակնունին, ինչպէս միշտ, վաղ գարթնելով, ածիլուեց, օծանուեց, երկար մտմտաց ու վիլ-ժուիֆ՝ հայր Կոմիտասին այցելելուց յարմար անելիք չգտաւ: Չնայած Շաբաթ՝ հանդիպման օր չէր, ուզեց անսպասելի յայտնութեամբ հանձնք պատճառել ծերուկին: Պատուիրանային ամենասխառն ուրախութիւնը մերձաւորին ուրախութիւն պատճառելը չէ՞: Խնամատար յանձնարումը, երբ վիլ-ժուիֆը արդարեւ սպաքինարանի երեք տարուայ բուժումը արդիւնք չտուեց, վիլիննա՝ Ֆրէյդի մօտ տանելն էլ չստացուեց, վարդապետին վիլ-ժուիֆի համեմատաբար էժանագին ապաստարանը փոխադրեց ու նրա նկատմամբ կարծես իր պարտքը կատարած համարեց: Նախկին ուշադրութիւնը գլացաւ:

Ետ-ետ փախչող, քունքերը մերկացնող մագերը սանրելիս՝ հայելին ծեփծեփուն ցոլցում, հեզնաժպիտով էր յիշեցնում, որ երբ Կոմիտասին Պոլսի թուրքական գինուորական հիւանդանոցից Փարիզ բերեց, գուռը գանգուրներով սորբոնական ուսանող էր: Ռուսիական «Տասիօ» նաւով իրենք տասնութ օր նոյն խցում ճամբորդեցին, ու ամէն գիշեր, հէնց հայր սուրբը նիրհում ու ինքը ճրագը յանգցնում էր, նրա ճակատին լուսապսակ էր ճառագում: Վերջին օրը չհամբերեց, յիշատակի համար լուսանկարեց քնած վարդապետին: Փարիզում այդ լուսանկարը չալտածել, փակցրել էր ուսանողական օթեւանատան սնարին: Սեւամորթ, շեղաչք, կապտաչ դասընկերուհիները, որոնց ազատ երեկոները հիւր էր հրաւիրում, անկողնի մօտ, մերկանալիս կամ հագնուելիս, լուսանկարին էին նայում, հարցնում:

-Յիսուս Քրիստո՞սն է:
Ինքը չէր պատասխանում...

Արագընթաց վայրաշարժը մշուշը պատառոտելով, աշնանային դաշտանտառի խոնաւ ընդարմութիւնը ցնցելով, վիլ-ժուիֆի էր սուրում ու որքան մօտենում էր մերձաւանին, այնքան տիրար Ակնունու տարեդարձի տօնակալութիւնը չքանում, տազնապով էր համակուում: Այդ գագացողութիւնն իրեն ծանօթ էր, միշտ էլ մինչեւ ապաստարան չէր հասնում, վարդապետին խշտեակին մեկնուած չէր տեսնում, չէր հանգստանում: Դեռ քանի տարի հոգեբուժարանի ծանօթ աստիճաններով բարձրանալիս նոյն խուլքը պիտի իրեն համակէր, վարդապետը երբեք փրկուելու էր, որ ինքն էլ փրկուէր:

Անսպասելի ներս մտնելը վարդապետը չզգաց: Թերեւս զգացել էր, բայց կոպերը կապարի պէս ծանր էին, ճիգ էր գործադրում, բարձրացնել չէր կարողանում: Դժգոյն, դալուկ այտերին որդանման կարմիր բծեր էին յայտնուել, որոնք մօրուքի միջից դուրս պրծնում, անհանգիստ վեր ու վար էին սողում: Երեւի կանխագագացումն էր դրդել, որ տարեդարձի օրով վեր էր կացել, Փարիզից

վիլ-ժուիֆ հասել: Փութով մօտեցաւ, ձեռքը ճակատին հպեց: Այրում էր: Քրտինքի կաթիլները, սակայն, որ բշտում, կայլակում էին կնճիռների ակօսներում, պաղ էին:

Փափուկ քայլերով յայտնուեց բուժքոչրը, հաւանաբար ոչ այնքան հիւանդին օգտակար լինելու, որքան վիճակը այցելուին պարզելու համար: Վիլ-ժուիֆի ապաստարանում, ինչպէս տասներեք տարի առաջ վիլ-ժուիֆը արդարեւ ապաքինարանում, գլխի չէին ընկնում, թէ ինքը կուսակրօն հոգեւորականի ինչն է, բայց քանի որ ամէնից յաճախ էր այցելում, հիւանդի դէմքը նրան տեսնելիս էր պայծառանում, հարազատն էին համարում: Թերեւս ապօրինի գաւակը: Այդ հաւանակալութեամբ էին նրա առջեւ իրենց հաշուետու գզում: Բուժքոչրը ցուցամտով շրթունքին տարաւ, որ Սեղբոսը բարձր չիօսի, քնածին չարթնացնի, ոտքերի կողմից ծածկոցը ծածուկ յետ տուեց: Վարդապետի ձախ ազդրը ծնկից ներքեւ ու դարձապարից մինչեւ մատների ծայրը վիրակապուած էր: Բուժքոչրը շշուկով բացատրեց, որ փաթաթանում բթամատում ոսկրային թարախակալում էր սկսուել, իրենք չէին իմացել: Չէին կարող իմանալ, որովհետեւ հիւանդը չէր զանգատուել, թերեւս ցաւը չէր էլ զգացել: Բուժող բժիշկը՝ Պոլ Աբելին պատահաբար էր նկատել ու փտախտը կանխելու համար անմիջապէս վիրահատարան էր փոխադրել: Հայր Կոմիտասի բթամատի թարախապալարը նշտարով ճեղքել, ախտագերծել էին, ոտնաթաթի լուսցումներ եւ դեղային դարմանումներ կատարել: Ամէն ինչ կարծես բարեյաջող էր աւարտուել, բայց վարդապետը յետվիրահատական բարդացումները դժուարութեամբ էր յաղթահարում, անընդհատ ջերմում էր:

Բուժքոչրը այդքան բացատրութիւնը բաւարար՝ իր պարտականութիւնը կատարած համարեց, պատրուակ յօրինեց, նոյն փափուկ քայլերով դուրս եկաւ: Սեղբոս Ակնունին մահճակալի ծայրին նստել, վարդապետի ինկագոյն դէմքից հայեացքը չէր կտրում, որովհետեւ դիմաշարժերով ինչ որ մէկի հետ խօսում, ամենայն հաւանականութեամբ միջոցում ճանապարհորդում էր: Մէկ էլ փակ աչքերով հարցրեց.

- Տղաս, եկա՞ր:
- Եկած եմ, Հայր Սուրբ:
- Լաւ ես արել, ես էլ անհամբեր քեզ էի սպասում:

Ակնունին գիտէր, թէ ինչու: Միշտ էլ անհամբեր էր սպասել, որ Պոլսում, Աստուածատուր Հարենցի Մեծ Կղզու ամառանոցում անաւարտ թողած ձեռագրերը՝ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականի ներդաշնակումը, «Մշոյ պարի» դաշնաւորումը բերի: Ու քանի որ ձեռնուկայն էր յայտնուել, հրաժեշտի պահին վարդապետը յորդորել էր ծուլութիւն չանել, անսպասման Մեծ Կղզի գնալ, յաջորդ այցելութեանը ձեռագրերը հասցնել: Որոշել էր՝ այստեղ, հոգեբուժարանում պիտի աւարտէր:

Ուտքով վերմակը վանեց, տարօրինակ էր, տասնութ տարուայ մէջ առաջին անգամ ձեռագրերը յիշեց:

-Օգնիր ելնեմ, տղաս:
«Տասիօ» նաւով համատեղ ճամբորդելուց յետոյ նրա համար

ժամանակը չի փոխուում, այսօր քառասուներկու տարեկան եմ դառնում, դեռ «տղաս, տղաս» է կոչում: Երկու ձեռքից բռնելով կանգնեցրեց:

Հատ երեւոյթին ջուրթափի կարիք ունէր, Սեղբոսը գիշերանօթը ոտքով մօտեցրեց, բայց նա շրջանցեց, պինդ սեղմուած շրթունքները, որ սեփ-սեւ էին, շարժուեցին.

-Ձանգերի ղողանջը լսո՞ւմ ես: Ապաստարանում տիւանդորրի լուծութիւն էր:

-Անշուշտ, Հայր Սուրբ: Արեւի ցոլքը ցոյց տուեց: -Ինձ պատուհանի մօտ տար, զանգակատունը տեսնեմ:

Վերջերս ցերեկուայ լոյսը տանել չէր կարողանում, շրջաբակ՝ պտոյտի էլ չէր իջնում, խլափեղկերը փակ էր պահում: Կաղալով, ցաւին դժուարութեամբ տոկալով, պատուհանին հասաւ: Շրջանակի մէջ, ինչպէս չինական ջրանկարում, հրէական առանձնատների աղօտ տանիքներն էին, որոնց կողմինդրներին տաքանալ էր փորձում հոկտեմբերեան մրսած սերել:

Գլուխը չէր կարողանում ուսերին պահել, ճակատը յենեց պատուհանի մետաղէ բռնակին: Պաղ հպումից աչքերը խոշորացան: Բիբերը նայում էին օտար մերձաւանի բնապատկերին, ծանօթ տեսարաններ էին փնտրում: Գտաւ, հայեացքն անսպասելի ջերմացաւ: Բայց չէր հասկացուում, թէ ինչ է ասում:

- Յղնայում գարուն է, սուրբ

Աստուածածին եկեղեցու ժամերգութեան ղողանջը երկնքում է: Տեսնո՞ւմ ես՝ Նոյն հասապետը Արարատից իջել, մեր՝ Սողոմոնանց Սողոմոնի այգում է առաջին խաղողի որթը տնկում: Թեւքերը քշտած առը բացում, հետն էլ իմ մշակած «Առաւօտուն բարի լոյս»ն է դնդնում: Յղնացի աղջիկները շատախօս են՝ աղօթարանը չձագած, աղբուրի գլխին չաչանակութիւն են անում: Մեր գիւղի օղը ուրիշ համ ու հոտ ունի, ով դուրս ելնի, էլ տուն մտնել չի ուզի:

Վերջապէս Սեղբոսը գլխի ընկաւ, որ վարդապետը հայրենի բարբառով է խօսում, որ երբեք չէր էլ լսել: Որտեղի՞ց պիտի լսած լինէր, Կուտինա գաղթած ցղնացիները նախճիւրի ահից միայն թուրքերէն էին խօսել, նա էլ մայրենի լեզուի փոխարէն թուրքերէն էր սովորել...

Հմայուած նայում էր Յղնայի տեսլապատկերին, նայում ու չէր յագնում: Շրջուեց Սեղբոսին, աւելին ուզեց.

-Բաց պատուհանը: Ակնունին խլափեղկը կիսով չափ դուրս հրեց: Կոմիտասը գլուխը հանեց, ողորուեց դժգոյն արեւով, բայց չերգեց.

Գոգի լեռնապարիս աղերսեց. -Հով արէ՛ք, սարեր ջան, հով արէ՛ք, իմ դարդին...

Ու քանի որ սարերը հով չէին անում, ընկրկեց, յետ-յետ գնաց, քիչ

Շարք էջ 20


Under the Auspices of
His Eminence Archbishop Hovhann Derderian
Primate of the Western Diocese
of the Armenian Church of North America

The Music Committee of the Western Diocese
cordially invites you to the inaugural concert
commencing a year-long commemoration of the
Centennial of the Armenian Genocide

An evening of chamber music
honoring
The Honorable George Deukmejian
35th Governor of the State of California

Featuring
Armen Guzelianian, piano
Armen Anassian, violin
Ruslan Biryukov, cello

Performing the music of Beethoven, Debussy, Babajanian and Arapjanian



Sunday, March 30, 2014
7:30 pm

St. Leon Armenian Cathedral
3325 N. Glenoaks Blvd, Burbank, CA 91504

For tickets contact the Diocesan Office at 818.558.7474

Admission: \$25

ԿԻՆԵՐԸ՝ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԾՆԱԾ ԵՂԱՆԱԿԻ

Բնութիւնը ձմեռը ծնած կիներուն կը պարզեւէ մարտական բնաւորութիւն: Նպատակասլաց, եռանդով լեցուն եւ քիչ մըն ալ յանդուգն ըլլալով՝ անոնք մշտապէս ուշադրութեան կեդրոնին են եւ կ'արժանանան համընդհանուր հիացմունքի: Սիրոյ հարցով նոյն պէս հիանալի «մարտիկներ» են. անոնց հետ ոտք մեկնել փափաքող մրցակցուհիներուն կը սպասուի լիակատար պարտութիւն: Անոնք գրեթէ միշտ կացութեան տէրն են: Զուգընկերով հետ յաճախ վէճեր կ'ունենան, քանի որ իրենց համար միակ ճշմարիտ սեփական կարծիքն է: Այնուամենայնիւ, եթէ անոնք կը սիրեն, դիւրութեամբ կը հաշտուին:

Անոնք լաւ կը զգան «գարնանային» անհոգ տղամարդոց կամ «ձմեռնային» յամառներու հետ:

Գարնան ծնած կանայք զրաւիչ են եւ անմիջական: Անոնք յաճախ կը սիրահարուին եւ նոյնքան յաճախ կը գերեն հակառակ սեռի սրտերը: Կողքէն երբեմն կրնան թեթեւամիտ թուիլ, սակայն կեանքի հանդէպ անյուրջ վերաբերմունքի տակ երբեմն թաքնուած է անհիքնափստահութիւնը: Անոնք իրականութեան մէջ կը վարնան կրքոտ յարաբերութիւններէն, մեծ սէրերէն, քանի որ գիտեն՝ սէրը որքան հաճելի, նոյնքան ալ դառն կրնայ ըլլալ: Բայց եթէ այս կամակոր հակի բախտը բերէ եւ հանդիպի հոգատար գուզընկերով, որ պատրաստ ըլլայ ամբողջ կեանքի ընթացքին յենարան եւ ուժեղ թիկունք ըլլալու, ուստի հնարաւոր է նաեւ ամուր ամուսնութիւն:

Աւելի հանգիստ կը զգան աշնան ծնած սիրալիր, բայց մանրախնդիր կամ վճռական ձմեռ-տղամարդու հետ:

ԼԻԱՐԺԵ ԿԵԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

-Սիրեցէ՛ք ձեր մտերիմները: Զեր ժամանակը անցուցէ՛ք անոր հետ, զոր կը սիրէք եւ դուք ձեզի յաջողակ պիտի զգաք:

-Շատ ժամանակ տրամադրեցէ՛ք ձեր սիրած մասնագիտութեան: Եթէ կը սիրէք ձեր աշխատանքը, աշխատեցէ՛ք որքան կրնաք շատ: Եթէ չէ՛ք սիրեր, ընտրեցէ՛ք այլ մասնագիտութիւն:

Անիկա շահակտ պիտի ըլլայ ե՛ւ ձեր, ե՛ւ ձեր շրջապատին համար: Աշխատանքը կը զբաղեցնէ մեր կեանքին մեծ մասը եւ կարելի չէ այդ ժամանակը վերածել տառապանքներու:

-Օգնեցէ՛ք այլ մարդոց: Մեր մէջ խորապէս ամրապնդուած է այլասիրութիւնը՝ շրջապատին օգնելու անհրաժեշտութիւնը:

Օգնելով ուրիշներուն՝ դուք

Ամառ կինը ուռմանթիկ է, զգացմունքային ու շուտ տպաւորուող: Ան կը հաւատայ, որ իւրաքանչիւր կին անպայման կը գտնէ իր երկրորդ կէսը: Երբ կը սիրահարուի, կը մոռնայ աշխարհի մէջ ամէն ինչ՝ սիրած էակին նուիրելով իր հոգիի ամբողջ ջերմութիւնն ու հոգատարութիւնը: Ան յաճախ կ'իտահարականայ իր ընտրեալը, որուն համար յաճախ դժուար է ասպետի դերի մէջ ըլլալը: Ամառ կինը հետ համաձայնելու լաւագոյն ելքը անկեղծ, անմիջական գրոյցն է:

Անոր համար հիանալի գուզընկեր կրնայ ըլլալ նոյնքան արեւային տղամարդը: Սակայն չի բացառուիր նաեւ, որ պաշտպանուած ու ասպհով զգայ աշնան ծնած տղամարդու լայն թիկունքի ետեւին:

Աշնան ծնած կանայք պարզ են, կրնան հեշտ ու արագ զրաւել շրջապատի ուշադրութիւնը, ինչպէս նաեւ հետաքրքրութիւն հրաւիրել իրենց անձին շուրջ: Անոնք բժախնդիր քննադատներ են, սակայն գիտեն ըստ արժանուցն գնահատել: Յաճախ ճնշուած կը զգան, սրտին մօտ կ'ընդունին անյաջողութիւնները: Անոնց հոգեհարազատ չեն ակնթարթային սիրահարուածութիւնները, պատահական կապերն ու մոլխաղերը: Անոնք իրենց նկատմամբ կը պահանջեն լուրջ եւ յարգալից վերաբերմունք: Իսկ եթէ որոշեն ամուսնանալ, գրեթէ երբեք չեն սխալիր իրենց ընտրութեան հարցով: Երբ սիրեն, ուրեմն կը սիրեն ամբողջ հոգիով: Ի վիճակի են իսկապէս երջանկացնելու իրենց ընտրած տղամարդը: Հիանալի գոյգ կը կազմեն թէ՛ գարնանային մեղմ տղամարդու, թէ՛ ամուսնային լաւատեսի, թէ՛ ձմեռնային վճռական տղամարդու հետ:

ԻՆՉՊԵՄ ՈՒՆԵՆԱԼ ԳԵՂԵՑԻԿ ՅՕՆՔԵՐ

Առաջին հայեացքով չնչին թուացող այս մանրուքէն նաեւ կախուած է կնոջ դէմքի գրաւչութիւնը: Գեղեցիկ յօնքերը աւելի կ'ընդգծեն աչքերը, կը քողարկեն յոգնածութեան հետքերը եւ թարմութիւն կը հաղորդեն հայեացքին: Յօնքերուն ձեւը ուղղելով՝ հնարաւոր է նրբացնել դիմագծերը, դարձնել աւելի կատարեալ, իտէպակական եւ արտայայտիչ:

Յօնքերը կրնան նաեւ տեղեկացնել մարդու ներաշխարհի, բնաւորութեան մասին: Անոնք կրնան դէմքը երիտասարդացնել եւ ծերացնել: Օրինակ՝ աղեղնաձեւ յօնքերը կ'երիտասարդացնեն, թաւ եւ լայն յօնքերը խստութիւն կը հաղորդեն, շատ երկար յօնքերը, որոնք աչքերու արտաքին անկիւնէն ցած չեն կախուիր, դէմքը կը դարձնեն թախծոտ եւ կը ծերացնեն զայն:

Պէտք է ըսել, որ դիմագիծերուն համապատասխան յօնքերու ձեւի ընտրութեան հարցով ընտրութիւնը մեծ մասամբ չի սխալիր եւ, որոշ սրբագրումներ կատարելով, կարելի է այդ անհատական դիմագիծը դարձնել աւելի արտայայտիչ:

Յօնքերուն ձեւը ընտրելու ժամանակ հաշուի կ'առնուի դէմքին

ՍՏԵՊԻՆԻՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Իզուր չէ, որ ստեպլինը կը համարուի փոքրիկ դեղարան: Դժուար է պատկերացնել, որ այս նուրբ բանջարեղէնին մէջ կուտակուած է չափազանց կարեւոր կենսաինիթերու եւ տարրերու ամբողջ համակարգ մը, որուն շնորհիւ կարելի է բուժել բազմաթիւ հիւանդութիւններ:

Ստեպլինը C, D, E, K, B խումբի կենսաինիթերու հարուստ աղբիւր է:

Յայտնի է, որ ստեպլինը ունի վէրքերը արագ ապաքինելու յատկութիւն: Բաւական է զայն քերել, տարածել վիրակապի մակերեսին ու դնել վէրքին:

Ստեպլինի հիւթը կը համարուի կենարար հեղուկ: Անիկա լայնորէն կը կիրառուի հիւթաբուժութեան մէջ: Գարնան ու աշնան սկիզբը, երբ առաւել զգայուն ենք վարակներու նկատմամբ, ցանկալի է մօտ 15 օր ստեպլինի թարմ հիւթ խմել. անիկա կը բարձրացնէ մարմնի դիմադրողականութիւնը:

Պաղաւտութեան ժամանակ խորհուրդ կը տրուի կոկորդի ողողումներ ընել ստեպլինի հիւթով: Ուժեղ հազի եւ խուպոտութեան պարագային կ'օգտագործեն ստեպլինի հիւթը՝ աւելցնելով 1 ճաշի դգալ մեղր: Պաղաւտութիւնը անցընելու նպատակով կարելի է նաեւ ստեպլինի եւ խնձորի հիւթերու խառնուրդ խմել՝ 2:1-ի յարաբերութեամբ: Ստեպլինի հիւթը յայտնի է յատկապէս տեսողութիւնը լաւացնելու եւ աչքերու

ձեւը: Հակիթաձեւ դէմքին կը յարմարին աղեղնաձեւ յօնքեր, քառակուսի դէմքին՝ երկար, դէպի վեր բարձրացող, երբեմն նաեւ՝ աղեղնաձեւ: Կլոր դէմքի պարագային յօնքերը ուղղելու ժամանակ նախապատուութիւնը պէտք է տալ դէպի վեր երկարող եւ վերջաւորութեան քիչ մը կտրացող յօնքերուն, իսկ երկար դէմքին կը յարմարին ուղիղ, քիթամատէն քիչ հեռու եղող յօնքերը:

Յօնքերը ուղղելու ժամանակ շատ կարեւոր է անոնց երկարութեան եւ բարձրութեան ճշգրտմը: Յօնքերը պէտք է սկսին եւ վերջանան որոշ կէտերու վրայ: Քիթի ծայրը եւ աչքի ներսի անկիւնը միացնող գիծը շարունակելով՝ կը նշուի այն կէտը, ուրկէ պէտք է սկսի յօնքը: Յօնքերը ուղղելու ժամանակ ամենաբարձր կէտը կը նշուի վերին շրթունքի կեդրոնը եւ ակնաբլբը միացնող գիծի ու յօնքի հատման կէտը: Յօնքը պէտք է աւարտի քիթի ծայրն ու աչքի արտաքին անկիւնը միացնող գիծի եւ յօնքի հատման կէտին: Այդ կէտը պէտք է աւելի վար գտնուի, քան յօնքի սկզբնակէտը, հակառակ պարագային դէմքը կը ստանայ տխուր արտայայտութիւն:

Հարմար հիւանդութիւններ (կարճատեւութիւն, շղկապեկի բորբոքում, հակուրուութիւն եւ այլն) բուժելու իր անգնահատելի յատկութեամբ: Հետեւաբար անոնք, որոնք տեսողութեան խնդիրներ ունին, ամէն օր պէտք է ստեպլին օգտագործեն: Անոնց յատկապէս օգտակար է ստեպլինի թարմ քամած հիւթը, որ պէտք է խմել առաւօտեան՝ անօթի ժամանակ: Ասիկա կը լաւացնէ նաեւ աղիքներու աշխատանքը՝ կը վերացնէ փորկապուցութիւնը, հետեւաբար կը նպաստէ նիւթափոխանակութեան ու մարմնէն թունաւոր նիւթերու հեռացման, կ'օգնէ յաղթահարելու մարմնական ու մտաւոր ծանրաբեռնուածութիւնը:

Շատ յաճախ ստեպլինի հիւթը կրնայ բուժել նոյնիսկ անպտուցութիւնը: Անիկա նաեւ օգտակար է յղի կիներուն եւ կերակրող մայրերուն: Կը լաւացնէ կաթի որակը՝ հարստացնելով անոր բաղադրութիւնը, միեւնոյն ժամանակ կ'օգնէ պաշտպանուելու աչքերու, ակնաջներու վարակիչ հիւանդութիւններէն: Փոքրիկներու կերակրացանկին մէջ նոյնպէս պէտք է անպայման ընդգրկել ստեպլինը: Այն փոքրիկները, որոնք կանոնաւորապէս կ'օգտագործեն ստեպլին, աւելի քիչ կը բողբեն տեսողութենէ, ախորժակի բացակայութենէ, աղեստամոքսային ուղիի խանգարումներէ: Առանձնապատու կէտք է նշել, որ ստեպլինի հիւթը կը նպաստէ փոքրիկներու աճին եւ ոսկորներու ամրացման:


ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ

Մանրամասնութեան համար գանգել նարիսէին


(626) 818-9949

Հասցէ՝ 1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծտեսակներու եւ մանուկներու Քայրափոքարիչ բուժում:
Գլխացու, վզի, մէջքի, յօդոցի եւ մկանային ցուրի:
Ինքնաշարժի վթարի մեղսներով պատասխան
վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

Ձանգեր Կրեմլից

Շարունակում է 2-էն

Հմնաց, Հայաստանում շուտով իշխանափոխություն է լինելու, ապա արժե հարց ուղղել նրանց՝ այն, ինչ դուք էք երազում իրագործել, Սերժ Սարգսյանը չի՞ իրականացնում գործնականում...

Գուցե առե՞լի նպատակաշարձար կը լինէր, որ «հուժկու ընդդիմադիրները» մէկընդմիջտ հասկանալին՝ գործիք լինելով հպարտանալ, նախ չարժէ, երկրորդն էլ՝ Մոսկուայի վերահսկողութեան տակ

լինելով՝ Կրեմլը Հայաստանում պահպանում է Սերժ Սարգսյանի իշխանությունը:

Մի խօսքով՝ «հուժկու ընդդիմադիրներին» ուղղում Մոսկուայից գանգերի միջոցով, Սերժ Սարգսյանի իշխանութեան պահպանումն առե՞լի անվտանգ է դառնում, որովհետեւ վերահսկելի ընդդիմությունը չի կարող անել մի այնպիսի քայլ, որը սպառնալիք կը դառնար Մոսկուայի ցանկացած հրահանգ կատարող իշխանութեանը:

«ՀԱՅԵԼԻ»

«Հայերը Վարժ են Իրենց Քուկները Իրենց Դահիճին Տալու»

Շարունակում է 5-էն

ըլլալով անոնք նոյնպէս կը մերժեն որեւէ փոփոխություն:

Իսկ համդիպումներ կ'ունենա՞ք պոլսահայութեան հետ:

-Ճիշդը տակաւին չեմ նախաձեռնած: Յարդ հանդիպեցայ Սեբաստիոյ Հայրենակցական միութեան անդամներուն հետ ու շատ արդիւնաւէտ անցաւ հանդիպումը:

-Վերադառնալով ընտրութիւններուն, ի՞նչ նպատակ կը հետապնդէ ձեր կուսակցութիւնը եւ բացի ձեզմէ այլ հայ թեկնածուներ կա՞ն:

-Այո կան: Մօտաւորապէս տասը հայ թեկնածուներ ունի մեր կուսակցութիւնը եւ անոնք տարածուած են Պոլսոյ տարբեր շրջաններուն մէջ: Օրինակ Շիշլիի շրջանին մէջ կարեւոր թեկնածու մը ունինք: Ունինք նաեւ Պաքըր գիւղին մէջ: Ըսեմ որ թեկնածուներէն մաս մը քաղաքապետական խորհուրդներուն անդամակցութեան համար պիտի պայքարին:

ՔԵՍԱՊԸ ՊԱՐՊՈՒԵՑԱԻ

Շարունակում է 6-էն

Լիայոյս ենք, որ Քեսապի հայութիւնը կրկին պիտի վերադառնայ իր հայրենի բնակավայրը, որուն կապումն է բազմահարկը տարիներէ ի վեր: Պիտի վերադառնայ, ու պիտի տնկէ նոր այգի՝ աւերուածին տեղ, պիտի վերանորոգէ իր տունը եւ շինէ նորերը՝ քանդուածներուն տեղ, որպէսզի վերածին հայ կեանքը այնտեղ աւելի պայծառօրէն, Հայկական Կիլիկիայէն հայութեան մնացած այդ վերջին բեկորին վրայ:

Կոչ կ'ուղղենք բարի եւ ազնիւ սրտի տէր մարդոց արթնելու աղէ-

Իսկ ի՞նչ կարելի է ըսել միւս կուսակցութիւններուն մասին:

-Տեղեակ եմ CHP նոյնպէս երկու հայ թեկնածու ունի եւ անոնց ընտրուելու հաւանականութիւնը շատ փոքր է:

-Աւարտին այլ ըսելիքներ կա՞ն:

-Պիտի խնդրեմ որ յետայսու Պոլսին ալ սփիւռք համարուի:

-Բայց գիտե՞ք որ շատեր կը վիրաւորուին եթէ Պոլսը սփիւռք համարենք:

-Թող վիրաւորուին, ատիկա իրենց խնդիրն է, բայց փաստ է որ իսթամպուլը մեր հայրենիքն է: Մենք բոլորս կամ մեր ջախջախիչ մասը Արեւմտահայաստանէն կու գանք: Ասիկա ճշմարտութիւն է: Պոլսը այսօր գաղութ է ուզեն կամ ոչ: Պէտք է բոլորը համոզուին այս խնդրով: Մեր բոլորին ծննդավայրը՝ գաւառն է, Արեւմտահայաստանն է: Իմ պարագայիս օրինակ նախահայրերս շատ հինէն ի վեր Պոլսի հաստատուած են, բայց ինծի համար Պոլսին ալ գաղութ է:

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

տահար քեսապցիներու միախառնութեան եւ անվտանգութեան համար: Կոչ կ'ուղղենք բոլորին, որ բարոյական եւ նիւթական կարելի ամէն տեսակի աջակցութիւն ցոյց տան անոնց՝ փորձութեան այս դժուարին ժամանակահատուածին:

Ամէն բանէ առաջ, քեսապցիները պէտք է լիարժէքօրէն զգան, որ առանձին չեն այս օրերուն, եւ որ իրենց ցաւակիրն է ու թիկունքին է հայութիւնը՝ աշխարհի ամբողջ տարածքին:

ԼՐԱՏՈՒԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ
ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ

ԿԵԱՆՔԻՍ ԳԱՆԱՊԱՐՅՈՒՄ - MY LIFE JOURNEY

Շարունակում է 14-էն

սախտութիւններով, հայերէն լեզուի դասընթացներով, մշակութային ձեռնարկներով, երիտասարդական կարիքներու հետապնդումով, անոնց դժուարութիւններու հոգացումով եւ տակաւին բազմաթիւ էջերու վրայ մանրամասնուած ծրագիրներով եւ գործունէութեամբ: Եւ այս բոլորը առանց որեւէ ազգային տեղատուութեան? հեռու հալոյ կաթսային վտանգէն: Մայրենի լեզուն տան խօսակցական լեզուն է իսկ Միացեալ Նահանգներու նոր քաղաքացի վահան թուրքիկեանը քաղաքավարօրէն կը մերժէ իր եւ իր դասեր Անահիտի անունը փոխելու ամէն կոչ:

Թուրքիկեանի Ամերիկեան ցամաքամասի գործունէութիւնները չեն ամփոփուիր Պոսթոնի Հայ Աւետ. Նահատակաց եկեղեցու տասը տարուայ եւ Տիթրոյթի Հայ Աւետ. եկեղեցու երեսուն տարիներու ծառայութեան մէջ: Առաջին օրէն իսկ ան յարանուանական թէ գաղութային բեմին վրայ է Հիւսիսային Ամերիկայի տարածքով աշխուժօրէն պատասխանատուութիւն վերցնող եւ պաշտօններ ուսաբարձողն է՝ թէ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետ. եկեղեցիները միութեան եւ թէ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան մէջ:

Կրկնակիօրէն մի քանի շրջան ստանձնելով Միութեան նախագահութիւնը, Թուրքիկեան անփոխարինելի դերակատարն է Միութեան եւ յարանուանական բազմաթիւ նուաճումներու: Ան անդամ է Մայր եկեղեցու հետ մերձեցման յատուկ յանձնախումբին, մասնակից Միութեան մէկ միլիոն տոլարի հանգանակութեան արշաւին, Միութեան, Աւետարանչականի եւ Հայկազեան Համալսարանի ամեակներու հանդիսութիւններուն եւ ոգեկոչումներուն, Միութեան եւ Աւետարանչականի ազգային անշեղ ուղղութեան պահակը, Միութեան եկեղեցիներու հայ Աւետարանական անունը կրելու ջատագովը, յետանկախ Հայաստանի մէջ աւետարանական համայնքի աշխուժ ներկայութեան քաջալերը, համազգային բեմերու վրայ աւե-

տարանական համայնքը ներկայացնող փայլուն դէմքը եւ տակաւին 13րդ գլխու բազմաթիւ էջերուն վրայ փոռած՝ սիրուած եւ փնտուած համայնքային ղեկավարը:

Թուրքիկեանի տեսլականին արգասիքն է Տիթրոյթի Հայ Աւետ. եկեղեցու ծոցին մէջ հիմնուած Հայ մշակութային ժառանգութեան տրամադրուած Հիմնադրամը որ հայ մշակույթի հետ առնչուած գանազան ծրագիրներու կողքին կը դառնայ հրատարակչը թուրքիկեան հեղինակին բազմաթիւ հրատարակութիւններուն:

1978ին ստեղծուած Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի ծնունդէն իվեր, Վեր. Թուրքիկեան նախ որպէս Խորհուրդի նախագահ եւ ապա որպէս անոր գործադիր տնօրէն, եռանդով կը շարունակէ իր ծառայութիւնը՝ Աստուծոյ, համայնքին եւ հայ ժողովուրդին, այս պարագային, ըլլալով մտայղացող, ծրագրող, համադրող, ներդաշնակող եւ գործադրող համակարգիչը, Խորհուրդի աշխատանքներու հոլովոյթին:

Վերապատուելին, 1991ին բախտաւորութիւնը ունենալով վերամուսնանալու ներքին եւ արտաքին գեղեցկութեան տէր, շնորհալի, քաղցր, խոհուն, հոգածու եւ կայտառ, կեանքի նոր ընկերոջ մը հետ՝ յանձին Ռոզէթ Բամբակեանի, երեկ եւ այսօր կը վայելէ անոր ամբողջական նեցուկը, գործակցութիւնը եւ ընկերակցութիւնը իր ամբողջ աշխատանքներուն մէջ:

My Life Journey - Կեանքիս ճանապարհը, 2014, 394 էջ, լաթակազմ, գրուած շապիկ, հրատարակութիւնը Armenian Heritage Committee, 3922 Yorba Linda Blvd. Royal Oak, MI 48073-6455, ձեռնարկ հեղինակի ծնողներուն՝ Յակոբ Ա. եւ Գեղանոյ թուրքիկեաններու, հաճոյքով եւ հպարտութեամբ ընթեռնելի, ծափահարելի եւ օրինակելի բայց տակաւին չաւարտած կեանքի մը պատմութիւնն է: Յանձնարարելի է բոլորին:

Վարձքը կատար պատուելի, գրիչը անսպառ եւ անդու աշխատանքիդ՝ երկար եւ բարի՝ ճանապարհ:

ԹՈՒՐԻՈՅ ԱՆՊԱՐԿԵՇՏ ՄՊԱՌՆԱԼԻՔ

Շարունակում է 6-էն

Իական վարչակազմի, արմատական խումբերու կամ ունէ այլ մէկու կողմէ, պիտի արժանանայ թուրքիոյ հակաարձակումին: Իր ինքնիշխան տարածքը պաշտպանելու համար թուրքիան առանց վարանելու պիտի ձեռնարկէ բոլոր կարելի միջոցներու: Ներկայիս ունէ վտանգ չկայ մեր տարածքներուն (գերեզմանը Սուրիոյ մէջ է) եւ գինտուորներու վրայ յարձակելու, սակայն մենք պատրաստ ենք ամէն քայլի՝ սպառնալիքի առկայութեան պարագային: Թրքական հասարակութիւնը կասկածի նշույլ անգամ պէտք չէ ունենայ այս առումով: Մինչդեռ թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան, գլխաւոր սպայակոյտի եւ ազգային հետախուզական կազմակերպութեան պաշտօնեաները մարտ 13-ին հան-

դիպած են, որպէսզի քննարկեն շահի գերեզմանի անվտանգութեան հարցը: Թէեւ Տաւութօղլու չէ յատակեցուցած, թէ թուրքիան ինչ միջոցներ պիտի ձեռնարկէ, սակայն թրքական լրատուամիջոցները կ'ենթադրեն, որ ան կ'ընայ յաւելեալ զօրքեր ուղարկել իրենց պաշտամունքի վայրը հակելու համար:

Իմ կարծիքով, Տաւութօղլուի սպառնալիքը պարզապէս Սուրիոյ դէմ սուր ճօճելու փորձ մըն է՝ շեղելու թուրք հասարակութեան ուշադրութիւնը վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի վերջին աղմկայարոյց եւ հաւանական յանցաւոր վարքագիծէն, թուրքիոյ մէջ մարտ 30ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններու նախաշեմին:

Թարգմանեց՝ ՌՈՒԶԱՆԱ ԱՒԱԳԵԱՆ

OBAMACARE ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՐԵԼԱՒՈՒԵՑԱԻ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱԾԵԱՆ

Նախագահ Օպամայի հաստատած «դիրամատուցելի խնամքի օրէնք»-ի կամ obamacare առողջապահական ապահովագրութիւնը բաւական լաւ եղաւ ամերիկացիներուն ջախջախիչ մեծամասնութեան համար, իսկառակ կարգ մը քննադատներու, մանաւանդ բազմամիլիոնատերերու եւ միլիարատերերու:

Տակաւին քանի մը նահանգներ կը հակառակին ատոր, եւ նոյնիսկ սահմանափակումներ կը հաստատեն անոր գործադրութեան իրենց նահանգներուն մէջ:

Նոր բարելաւումը այն է որ անոնք որոնք արդէն իսկ ապահովագրութիւն մը ունին որոնք չեն համապատասխաներ նախագահին սահմանուած չափանիշներուն, պիտի կարենան իրենց ունեցած ապահովագրութիւնը պահել մինչեւ 2017: Առ ի հետեւանք շուրջ մէջ միլիոն ամերիկացիներ եւ մէկ միլիոն փոքր առեւտուրներ պիտի օգտուին այս նոր դրութեան:

Վերլուծաբանները կ'ըսեն թէ այս բարելաւումը ողջմիտ մօտեցում մը եղաւ պետութեան կողմէ եւ մէկ աւելի քննադատներ չէզոքացան:

Իսկ քանի մը քննադատ-լրագրողներ կ'ըսեն որ այս վերջին բարելաւումը քաղաքական մեծ ազդեցութիւն պիտի ունենայ ի նպաստ դեմոկրատներուն:

ՖԱՅԵԳԻՆ ՑԱԻԸ ԵՒ ԿՈՉՈՒՄԸ

Շարունակում է 15-էն

Այս իմաստով ան կը սկսի անդրադառնալ «կոչումի մը», որ իր կեանքը պիտի դարձնէր նշանակալից եւ արժէքի գիտակցութեամբ լի:

Ֆայեգ իր կոչումի վերածուած կեանքը կը դնէ ի սպաս եկեղեցական ու քրիստոնէական-հոգեւոր ծառայութեան: Ան աստուածաբանական ուսում կը ստանայ եւ քառասուն տարեկանին կը ձեռնադրուի կղերական՝ ծառայելու համար Պաղատատի մէջ գտնուող Անկլիքան եկեղեցու: Ան մինչեւ օրս իր ծառայութիւնը կը շարունակէ, նոյնիսկ երբ կեանքը դժուար է իրաքի մէջ, եւ ամէն օր մահուան վտանգին ու սպառնալիքներուն մէջ է՝ ներառեալ որպէս քրիստոնեայ ներկայութիւն:

Ֆայեգ լծուած է իրաքեան հայրենիքի ծառայութեան: Եկեղեցուց կողքին կը գործէ փոքրիկ հիւանդանոց մը, ուր բժշկական խնամք կը հայթայթէ անխտիր բոլոր ժողովուրդին: Եկեղեցին ունի մանկապարտէզ մը, որուն աշակերտները մեծաւ մասամբ տեղացիներ են, եւ ուր կը սորվին նաեւ Քրիստոսի սիրոյ մասին: Ֆայեգ կը ծրագրէ մանկապարտէզի բաժանմունքը վերածել նախակրթարանի: Ան լծուած է քրիստոնեայ-խալամ երկխօսութեան, քանի որ կը հաւատայ կրօններու եւ ինքնութիւններու գոյնութեան, եւ որ իրաքի մէջ կայունութիւն կարելի է հաստատել երբ կայ համերաշխութիւն: Նաուալը կանոնաւոր կերպով կը կազմակերպէ տիկնանց հաւաք՝ շաբաթական դրութեամբ, ուր քրիստոնեայ եւ իսլամ աւելի քան երեք հարիւր կիներ կը հանդիպին եւ կը սորվին իրարու հետ ապրելու եւ գոյակցելու՝ քրիստոնէական սիրոյ հասկացութեան մէջ:

Բայց եթէ կայ Ֆայեգի կոչումին խանդավառութիւնը, նոյնքան առկայ է նաեւ մտահոգութիւնը: «Քրիստոնեայ ներկայութիւնն ալ աւելիով կը նուազի», կ'ըսէ Ֆայեգ: «Չենք կրնար կասեցնել արտագաղթը:

Իրաքի քաղաքական անապահով վիճակներուն մէջ՝ գրեթէ ամէն նորեայ դրութեամբ ականուած ինքնաշարժներու պայթումներ, որոնք մեծաթիւ գոհեր կը խլեն ու իսկական արհաւիրք կը ստեղծեն, «ի՞նչ

կը զգաս երբ իրաքի ներկայ այս վախ ու դողին մէջ կը շարունակես գործել», հարցուցի:

Ֆայեգի դէմքին վրայ ուրու-ուրազուեցաւ փոքրիկ ժպիտ մը, որուն ետին կը տեսնէիր նոյնքան պատմութիւն եւ մտահոգութիւն: Կարելի եղաւ անոր դէմքին արտայայտութիւնը «ըմբռնել», որովհետեւ իբրեւ լիբանանցի կայ նաեւ իմ (մեր) լիբանանեան ապրած (տակաւին շարունակուող) կեանքի փորձառութիւնը՝ իր որոշակի նմանութիւններով:

«Երկիրը ամբողջ վնասի մէջ է», ըսաւ Ֆայեգ: «Եւ վնասին որ կողմն ալ որ դառնաս, շահ է»: Ապահովութիւն չունինք եւ սորվեցանք մեր կեանքերուն խաղաղութիւն տալ՝ կեանքեր կերտելով անապահովութիւններուն մէջ:

Իսկ խաղաղութեան կեանքերը: Ֆայեգն է դարձեալ. «Մարդուն խաղաղութիւնը իր հոգիին մէջն է եւ Քրիստոսով է», եզրակացուց:

Ու Ֆայեգ մինչեւ այսօր կը շարունակէ իր առաքելութիւնը՝ խաղաղութեան կեանքեր կերտել ոչ խաղաղ եւ անապահով իրաքի մէջ:

Եթէ Ֆայեգի հետ հանդիպումս եղաւ քաջալերական, բայց նաեւ՝ խոստմնալից: «Կարօտը ունիմ կրկին հայերէն լեզուին տիրապետելու», ըսաւ Ֆայեգ: «Վերստին պիտի սորվիմ ու յիշեմ: Հայկական ինքնութիւնը ինձի համար ԱՐժԻՔ է»:

Ֆայեգ կը պատկանի այն նուիրեալներուն փաղանգին, որոնք իրենց ապրած (ու տակաւին ապրող) ցաւոտ կեանքերը վերածած են կոչումի: Եւ եթէ կոչումը մէկ կողմէ հաւաքական աշխատանքի ու ծառայութեան համար է, բայց նաեւ ազգային ինքնութեան եւ անոր արժէքին ինքնագիտակցութեան: Ինքնագիտակցութիւն մը, որ կոտորակուած ու խառնուած ըլլալով հանդերձ, անպայման դուրս կը ժայթքի որպէս ամուր եւ մղիչ ուժ: Ա՛յս ուժով է, որ ցաւոտ կեանքերը կը վերածուին կոչումի:

Հայուն պատմութեան փորձն ու փորձառութիւնն է ասիկա ցաւոտ պատմութիւնը վերածել կոչումի՝ նուիրական կեանքի:

Այս կոչումին մէջ է հայուն պատմութեան եւ կեանքի շարունակականութեան գրաւականը:

ԱՐԱ ՇԻՐԱԶ

Շարունակում է 13-էն

րազի եւ Ս. Կապուտիկեանի գաւակն էր նա: Ստացել է մասնագիտական կրթութիւն՝ նախ Փ. Թերլեմեզեանի անուան ուսումնարանում, ապա աւարտել է գեղարուեստաթատերական ինստիտուտի քանդակի բաժինը: 1987-1992թթ.

ընտրուել է Հայաստանի նկարչներին միութեան նախագահ: ՀՍԽՀ վաստակաւոր նկարչի կոչում ունէր, պետական մրցանակի դափնեկիր է եղել 1979թ.-ին: 2008-ին արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին, 2009-ին՝ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական նկարչի կոչման:

ԱՐԵՒՍԱՐԱՅՅԵՐԵՆԻ ՊԱՅՊԱՆՈՒՄ

Շարունակում է 15-էն

նկատեց որպէս սպառնալիք՝ իր մայրենի լեզուին, ինքնութեան, մշակոյթին եւ դարաւոր պատմութեան պահպանումին եւ շարունականութեան», - ըսաւ Դոկտ. Ճէպէճեան:

«Հայուն համար Լիբանանը վերապրումի խորհրդանշէ է, որովհետեւ հոս հայը օժտուեցաւ լիբանանեան հպատակութեամբ եւ դպրոց եւ եկեղեցի շինելու իրաւունքով», - ըսաւ դասախօսը: Ըստ Դոկտ. Ճէպէճեանի կատարած ուսումնասիրութեան այս տուեալները մեծապէս օժանդակեցին հայ փոքրամասնութեան լեզուապահպանումի ճիգերուն եւ սատարեցին անոր կրթական, մշակութային եւ տնտեսական բարգաւաճումին: Հետեւաբար, կարելի եղաւ ձեռքադառնալ թրքերէնէն եւ քրտերէնէն եւ կառչիլ մայրենիին՝ հայերէն լեզուին, որ պիտի երաշխաւորէր վերապրում՝ արմատախիլ եղած ժողովուրդի մը, օտար ափերու վրայ:

«Ահա, թէ ինչո՞ւ հայը նախ պէտք էր տիրապետել հայերէն լեզուին, արաբերէնէն՝ մեծամասնութեան լեզուէն առաջ: Այս լեզուամտածողութիւնը մեծապէս սատարեց առաջին երկու սերունդներուն լեզուապահպանումի համոզմունքներուն կառչելու եւ անտեսելու արաբ դրացիներուն եւ բարեկամներուն կատարած քննադատութիւնները իրենց լեզուական թերութիւններուն առնչութեամբ: Եւ հոս է, որ լիբանանցիին այսպէս հայը եւ քննադատեց հայուն արաբերէն լեզուի չգիտութիւնը, առանց փորձել հասկնալու հայուն հոգեբանական, պատմական եւ լեզուաքաղաքական մտածողութիւնը», - բացատրեց Դոկտ. Ճէպէճեան:

Ապա ան անդրադարձաւ այն իրողութեան, թէ երրորդ եւ նոր սերունդը, երբ սկսաւ անդրադառնալ, թէ Լիբանանը մշտական տուն եւ հայրենիք կրնար դառնալ, աւելիով սկսաւ շողովիլ տեղացիներուն հետ, տուն-դպրոց-եկեղեցի ցանցէն հեռացաւ, աւելի ատակ դարձաւ արաբերէն լեզուին, երբեմն ալ հայերէնին հաշուոյն, աւելի մեծ թիւով խառն ամուսնութիւններ սկսաւ կնքել, անձնական շահերը ազգային նախապատուութիւններէն վեր համարեց եւ օտար արժէքափեր որդեգրեց, Լիբանանի մէջ հայը վերատեսուութեան ենթարկեց հայերէն լեզուին եւ հայկական ինքնութեան առնչութեամբ իր ժառանգած կեցողութիւնը եւ վերաբերմունքը:

Դոկտ. Ճէպէճեան ընդգծեց, թէ նոյնն է պարագան աշխարհի մէջ շատ մը այլ լեզուական փոքրամասնութիւններու պատմութիւնը, որոնք պատրաստ են, մանաւանդ տնտեսական պատճառներու համար եւ մեծամասնութիւն կազմող ժողովուրդին կողմէն բանեցուած ճնշումներու, փոփոխու-

թեան ենթարկելու իրենց ազգային արժէքափերը, նպատակակէտերը, լեզուական հաւատարմութիւնները եւ ազգային համոզմունքները եւ մոռացութեան եւ անհետացումի ենթարկելու իրենց մայրենի լեզուն եւ իւրաքանչիւր մշակոյթները:

«Լեզուներ կարելո՞ր են հաղորդակցութեան համար, սակայն անոնք ա՛լ աւելի կարելո՞ր են, որովհետեւ իւրաքանչիւր լեզու կը պարունակէ թէ՛ անձնական եւ թէ՛ ազգային պատմութիւններու բանալին, կը յատկանշէ ժողովուրդի մը մշակութային ինքնութիւնը, կ'ընդգծէ նախնիներու հետ կապը եւ շարունակականութիւնը, կ'արտացոլայ իւրաքանչիւր աշխարհահայեացք, կ'ընդգրկէ անհրաժեշտ եւ հմայիչ քերականական, բառագիտական եւ հնչիւնաբանական յատկանիշներ եւ կը յառաջացնէ ինքնավստահութիւն եւ մշակութային հպարտութիւն», - ըսաւ Դոկտ. Ճէպէճեան:

Դասախօսը կոչ ուղղեց ներկաներուն՝ վերաբեւոյնելու իրենց կեցուածքը Լիբանանի մէջ հայերուն հանդէպ, թիկունք կանգնին հայերէն լեզուին եւ զայն գործածողներուն, եւ սատարեն հայ համայնքին հայերէն լեզուի պահպանումի ճիգերուն: «Հայերուն տնտեսական, մշակութային, կրթական, մարդասիրական, քաղաքական եւ ընկերային ներդրումը շատ մեծ եղած է Լիբանանի մէջ: Անոնց մայրենի լեզուի պահպանումը ա՛լ աւելիով պիտի սատարէ այս փոքրամասնութեան անգնահատելի մասնակցութեան եւ օժանդակութեան այս հիւրընկալ երկրին, երբ անոնք ամուր կառչին իրենց մայրենի լեզուին, որովհետեւ մայրենի լեզուն աղբիւրն է մտային կարողութիւններու լաւագոյն օգտագործումին, տարբեր աշխարհայեացքի, ստեղծագործական կարողութեան, պատկանելիութեան, պայքարելու պատրաստութեան, տնտեսական եւ քաղաքական հորիզոններու ընդարձակումին եւ Յեղասպանութեան լուծման հետապնդումի գիտակցութեան»:

Դասախօսը պատասխանեց ներկաներուն հարցումներուն եւ աւելորդ լուսաբանութիւններ տուաւ, որովհետեւ մեծ էր անոնց հետաքրքրութիւնը: Անոնք մեծապէս գնահատեցին սոյն իւրաքանչիւր դասախօսութիւնը, որ առիթը ընծայած էր աւելի մօտէն ճանչնալու Լիբանանի հայ համայնքը, գնահատել անոր լեզուապահպանումի դրդապատճառները եւ ճիգերը եւ անդրադառնալ հայերէն լեզուի՝ տեղական եւ համաշխարհային առումով, պահպանումի անհրաժեշտութեան եւ անյետաձգելի արհեստավարժ եւ ակադեմիական միջամտութեան սատարելու անոր շարունակականութեան եւ գոյատեւումին:

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

Ձեր Ծանուցումները Վստահեցե՛ք
«Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863
 massis2@earthlink.net

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
OFFICE SPACE FOR RENT
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով
 հեռաձայնել՝ (626) 398-0506

ՀԱՅՐ ԿՈՄԻՏԱՍԻ ՅԵՏՄԱՅՈՒ ԳՈՂԳՈԹԱՆ

Շարունակում էք 16-էն

մնաց պիտի ընկնէր: Աղերսեց Սեղ-բոսին:

- Ինձ այստեղ չթողնես,- ձայնը կերկերաց,- Ինձ մեր դրախտավայրը կը տանես:

- Կը տանեմ,- գլուխը հակեց Սեղբոսը:

- Խոստանո՞ւմ ես: Ծար չունէր: Խոստացաւ:

- Տե՛ս, չզլանաս, դու ինձ տեսնող վերջին հայր պիտի լինես:

Սեղբոսը մտախոռով նայեց վարդապետի դէմքին, դարձեալ վատ նախագագացում ունեցաւ, ուզում էր հողորդութեան համար քահանայ կանչել, կանխեց:

- Պէտք չի, չոքիր, ես քեզ օրհնեմ, քեզնով օրհնանքս թող աշխարհի հայերին հասնի:

Հլու-հնազանդ ծնկի իջաւ: Հայր Կոմիտասը սառչող ձեռքը Սեղբոսի գլխին էր դրել, ոտքերը կ'ընկնուէր, ծալում էին, բայց յամառօրէն ուզում էր «Պահպանիչ» ասել:

- Պահպանեա՛ զմեզ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւղ քով ի խաղաղութեան, փրկեա՛ յերեւելի եւ յանրեւելոյթ թշնամուոյն: Արժանաւորեա՛ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն..

Լուել, ըստ երեւոյթին դեռ ասելիք ունէր: Իր մէջ ոյժ գտաւ, ասաց.

- Յիշեա՛ Տէր՝ մանաւանդ ի հոգիս առաւել քան մէկ ու կէս միլիոն նահատակացն ազգիս Հայոց, որք յամին 1915-ի եւ յայսպէս, ի սպանդ եւ յաքոր վարեալ՝ ազգազգի տանջանք շարժանք եղեն ի ձեռն ազգասպան Թուրքիոյ վասն հաւատոյ եւ հայրենեաց իւրեանց:

Փակ կոպերից արցունքներ ասհեցին, դողդողացին, կորան մօրուքի աղբեկ բաւիղներում: Հայեացքը մշուշուեց, կորցրեց հաւատարակչութիւնը: Գրկելով, Ակնունին իր մշտական տեղը՝ անկիւնի խշտեակը տարաւ, ոսկրացած դէմքին գոհունակութիւն տեսաւ:

- Հիմա ինձ մենակ թող տղաս, պիտի քնեմ: Անմիջապէս փակեց աչքերը:

Ակնունին մի քանի ակնթարթ էլ սպասեց, համոզուեց, որ վարդապետն իրօք նիրհում է, յետ-յետ նայելով, դուրս եկաւ: Ուզում էր անպայման բուժող բժշկին տեսնել, վիճակը պարզել:

Պոլ Աբելին բուժացն աւարտել, հիւանդների օրագիր մատենանում նշումներ էր կատարում: Հին գրառումները թերթում, աչքի էր անցկացնում, նորերը յաւելում:

- Ինչպէ՞ս է մեր հիւանդը,- հպանցիկ բարեւին անմիջապէս յաջորդեց այցելուի վեհերոտ տագնապը: Առանց բարձրացնելու՝ Պոլ Աբելին գլուխն անհասկանալի տարուբերեց:

Ակնունին չէր ուզում, որ բժիշկը հարցն անպատասխան թողնի: Ու մանաւանդ՝ յանձնուի:

- Դո՛ւք էլ յուսահատուեցիք, ինչպէս ձեզնից առաջ Մորիս Դիւկոստէն յուսահատուեց,- զարմացաւ, որ ձայնը խորքից, խուլոտ հնչեց:

Պոլ Աբելին (նրա հիմնական մասնագիտութիւնը հոգեներդաբանութիւնն էր), գրառումը կիսատ թողեց, Սեղբոսին յառեց անշրջանակ ակնոցի ետեւում խոնաւ թուացող աչքերը:

- Միալու՞մ էք,- ասաց,- իմ նախորդը՝ Դիւկոստէն ամենեւին չէր յուսահատուել: Դո՛ւք ամէն շաբաթ այցելել ու ակնատես էք եղել՝ նա Կոմիտասին բուժել է տանհիւնդ տարի՝ թէ՛ վիլ-էվարում եւ թէ՛ այստեղ՝ վի-ժուիֆում, այնպէս որ նրանից լաւ ոչ ոք չէր կարող իմանալ հիւանդի ախտաբանութիւնը: Տեսէք, թէ՛ հեռանալուց առաջ ինչ գրառում է թողել մատենանում:

Պոլ Աբելին վերջապէս յիշեց, որ այցելուին պիտի աթոռ առաջարկի ու անմիջապէս էլ մոռացաւ, էջերը ետառւղ տարաւ, գտաւ Դիւկոստէի եզրակացութիւնը, կարդաց. «Ես հիմա էլ եմ կրկնում, որ մեր հիւանդը կարող է ապաքինուել: Դժուարանում եմ ասել, թէ երբ, քանի որ իմ կանխատեսումը արտաքին տպաւորութիւնների վրայ է հիմնուած, ես ուղղակի նրա հետ առնչուել չեմ կարողանում, բայց շատ կը զարմանամ, եթէ սխալուեմ»:

Գլխարկը անշարժացաւ կանգնած Ակնունիի ձեռքում:

- Նոյնը բուժող միւս բժիշկը՝ հոգեախտաբան Լեոֆֆն է պնդել,- մատենանի էջերը շարունակում էր թերթել Աբելին,- նա Կոմիտասի ինամատար յանձնախմբի անդամներին հանդիպելիս յուշէր, անգամ յատուկ նամակով ինզրել է բարձրակարգ հոգեբուժարան տեղափոխել, առանձնայատուկ բուժում ապահովել: Լսեցէք, թէ ինքն ինչ է գրում. «Իմ առաջարկած հոգեբուժարանում բուժումը չափազանց թանկ արժէք, բայց այս պարագայում, կարծում եմ, Կոմիտասի հայ բարեկամները միջոցներ չպէտք է խնայէին: Նրանք, իրօք, ոգեւորուեցին, խոստումներ տուեցին, գնացին ու ոչինչ չարեցին...»:

Հոգեներդաբանը անշրջանակ ակնոցը հանեց, հիւանդի մատենանի նոր կարդացած էջին դրեց: Նա երեւի իօսակցութիւնն ուզում էր աւարտուած համարել, բայց Սեղբոսը այդքան շուտ տեղի տալու միտք չունէր:

- Ուզում էք ասել,- անվտանգ ձայնն իրեն էլ դուր չեկաւ ու զարմացաւ, որ կակազեց,- մենք անտարբէր ենք եղել մեր վարդապետի ճակատագրի նկատմամբ:

Աբելին բարեհոգի ժպիտով շտապեց հանգստացնել նրան:

- Ամենեւին, ես ակնատես վկայ եմ, Կոմիտասը ձեզ համար սրբութիւն էր, դուք՝ հայերը՝ նրան պաշտում էիք, բայց մոռանում էիք, որ նա նաեւ մարդ է, հիւանդ մարդ, ում բուժելը մեր բոլորի առաջնային պարտականութիւնը, նպատակը պիտի լինէր: Հիմա թերեւս ուշ է նման իօսակցութիւն շարունակելու համար, բայց, որպէսզի սրբազան Սեղբոսը, որ չեմ հետ պատճառով հին հողաթափերը ոտքերը սեղմում, ցաւեցնում էին: Քանի օր է՝ ինամատար յանձնախմբի անդամներին հեռաձայնում, նոր, կակուղ գուլպաներ, լայն հողաթափեր եմ ինզրում, ուշացնում եմ:

Առանց հրաժեշտ տալու Ակնունին դուրս նետուեց, որ նշանակում էր՝ հիմա գալիս եմ: Նա անպարանքով փողոց իջաւ, առաջին իսկ վաճառատնից նոր հողաթափ, գուլպայ, գդակ գնեց, ապաստարան փութաց:

Հրաշք էր պատահել՝ Կոմիտաս վարդապետը վախճանուել էր: Երկնքում մէկընդմիջ մարել էին Յղնայի Սուրբ Աստուածածին եկեղեցու դռանը:

Այդ օրուանից յետոյ, ընդհուպ Կոմիտասի աքորավայրում՝ Բուրուզեհակում անյայտ բացակայ համարուելը, Սեղբոս Ակնունին ծննդեան տարեդարձը չէր նշում:

Նրա մահը վախճան չէր, տառապանքների ճամբաբաժինը, յաւերժութեան յայտնութիւնն էր: Փարիզից վիլ-ժուիֆ փութացած Արմենակ Շահմուրադեանը, Շաւարշ Միսաքեանը, Մարգարիտ Բաբայանը, Սեղբոս Ակնունին, Յարութիւն Աճէմեանը շրջապատել էին մահանարն ու զմայլուած դէմքին էին նայում: Վերջապէս ճակատի կնճիռները հարթուել էին, շրթներին մեղմութիւն, անգամ ներողամտութիւն էր ուրուագծուել: Գեղանկարիչ Յարութիւն Աճէմեանը դեռ չգիտէր, թէ մահամերձ վարդապետին Սեղբոս Ակնունին ինչ է խոստացել, պնդում էր, որ նման վեհացած, սրբացած դէմքը չպէտք է հողի տակ անհետ կորչի, ճիշդ կը լինի, եթէ այսուհետ այդպէս յիշուի, սերունդների մտապատկերում այդպիսին յաւերժանայ: Շտապ տուն գնաց, հունցած գիպս բերեց:

Ֆրանսահայերը, ինչպէս աշխարհի բոլոր հայերը մեռել շատ էին սիրում: Մինչ Յարութիւն Աճէմ-

եանը վարդապետի մահադիմակը հանեց, հէնց ապաստարանի միջանցքում ինամատար յանձնախումբը յուղարկաւոր յանձնախմբի վերածուեց: Պարզուեց՝ շատերն էին ձգտում իրենց անունները տեսնել Կոմիտասի յուղարկաւորութեան սգազդերում, ինամատար յանձնախմբին յաւելուեցին հոգեւոր հայրեր եւ ի հարկէ՛, կարգ էր, տարբեր կուսակցութիւնների, յարանուանութիւնների, հայրենակցականների ներկայացուցիչներ: Սեղբոս Ակնունունը վերջում, խորհրդակցական ձայնի իրաւունքով արձանագրեցին: Ընդ որում այն բանի համար, որ հայրը՝ Ակնի կրթական ու գրական մշակ, միանգամայն հրապարակագիր, բեմասաց Արփիար Ակնունին էր 1915- ի Ապրիլի վերջին Չանդրիից հեռագրեր չղել Պոլսի եւրոպական դեսպանութիւններ, թախանձել էր գոնէ Կոմիտասին վերահաս պանդից փրկել: Պոլսում թալանարկու ու էնվերը կարդացել էին այդ հեռագրերը, նախ պատուել, աղբարկղն էին նետել, յետոյ, քանի որ նախճիրը յաջողութեամբ իրականանում էր, որպէսզի եւրոպական դեսպանատներում մարդասէր, մշակութասէր թուան, Կոմիտասին յետ էին բերել տուել: Իսկ Արփիար Ակնունուն, օսմանեան բարեխնամ կառավարութեանը անուանարկելու համար, կառափնատել էին:

Թէ ինչ հպարտանալու բան էր, հետագայում, Հարաւային Ֆրանսիայի՝ Այն թիբի ծովահայեաց դաստակերտում հաստատուած տիար Արփիարի նորահարուստ թոռուհիները՝ Շաղիկն ու Շողիկը, որոնք հայերէն բարեւել էլ չգիտէին, բայց լայն ճակատով, խաժ աչքերով, թանձր ու թուխ թարթիչներով նոյն Ակնունիներն էին, առիթով ու անառիթ հարկ էին համարում ֆրանսիացի հարեւանուհիներին պատմել, որ հայր Կոմիտասին իրենց պապն է փրկել ու այն չորս գլուխներից մէկը, որոնց թուրք դահիճները խորածորում կառափնատելուց յետոյ ձմերուկի պէս թեւերի տակ դրած լուսանկարուել են, իրենց հայրիկի հայրիկինն է:

Այդ լուսանկարը, ամէն Ապրիլի 24-ին, «Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք...» գլխագրով տպագրում էին Սփիւռքի համարեա՛ բոլոր, վերջերս նաեւ օտարալեզու թերթերը:

(Շարունակելի)

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի
Երեկոյեան Ժամը 10:00-ից 12:30
Կլէմտէյլի 380-րդ կայանից